

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

**ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԵՎ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ**

031000 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ՄԱՍ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

I. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները.....4

II. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և մագիստրոսական ծրագրի աշխատանքային ծավալը..... 5

III. Մագիստրոսի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները.....7

IV. Կրթական ծրագրի ուսումնական հատված..... 7

4.1. Ընդհանուր դասընթացներ.....7

4. 2. Մասնագիտական պարտադիր դասընթացներ.....7

4. 2.1. Կամընտրական դասընթացներ.....9

4.2.2.Մանկավարժական դասընթացներ.....10

4.2.3. Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա.....10

4.3. Գիտահետազոտական աշխատանք11

4.4. Ավարտական պահանջներ.....11

4.4.1. Ընդհանուր ավարտական պահանջներ..... 11

4.4.2. Մասնագիտական ավարտական պահանջներ..... 11

5. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը.....12

5.1. Համակարգի հիմնադրույթները.....12

5.2. Գնահատման մեթոդաբանությունը.....12

5.3. Կիրարկման ընթացակարգը.....15

5.4. Գնահատման սանդղակը և նշագրումը.....16

6. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը.....16

7. Ուսման առաջադիմությունը.....17

8.Դասընթացի վերահանձնումը և կրկնումը.....18

9.Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը.....19

10. Կրեդիտների փոխանցումը.....20

11. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի պարտականությունները.....21

12. Ուսանողի իրավունքներն ու արտականությունները.....21

13. ՎՊՄԻ մագիստրատուրայի ուսումնական օրացույց..... 22

ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

Տեղեկագրքի նպատակը

031000«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրոսական ծրագրի տեղեկագիրք

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթամաս.....22

2. Մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամաս28

3. Կամընտրական դասընթացների կրթամաս.....35

4. Մանկավարժական առարկաների կրթամաս..... 54

5. Այլ բաղադրիչներ..... 57

ՆԱԽԱԲԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Միբեյի' ուսանողներ

Ինչպես հայտնի է, Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները (այդ թվում նաև ՎՊՄԻ-ն) ներգրավվել են Բոլոնյան գործընթացի մեջ, որը նպատակ ունի ստեղծելու Եվրոպական միասնական բարձրագույն կրթական տարածք: Այս գործընթացի շրջանակներում ՎՊՄԻ-ն արդեն երկու տարի լայնածավալ բարեփոխումներ է սկսել իր կրթական համակարում: Բուհում իրականացվող բարեփոխումները միտված են ուսուցման արդյունավետ կազմակերպմանը, կրթության որակի բարձրացմանը, վերջինիս համապատասխանեցմանը եվրոպական կրթական չափանիշներին: Անցումը կրեդիտային համակարգին ուսումնական գործընթացը և նրա արդյունքները դարձնում է ավելի արդյունավետ, շարժուն, մատչելի ու ընթեռնելի, ինչը մոտ ապագայում հնարավորություն կտա ձեռք ուսումը շարունակելու եվրոպական բուհերում և մուտք գործելու գլոբալ աշխատաշուկա:

Անցում է կատարվել ուսանողակենտրոն ուսուցման, որը լավագույնս արտահայտում է ուսանողության շահերը: Շարունակաբար կատարելագործվում են կրթական ծրագրերն ու ուսումնական պլանները և ուսանողին հնարավորություն է ընձեռվում անձամբ մասնակցելու իր ուսումնական պլանների կազմման գործընթացին և ինքնուրույն կազմակերպելու իր ուսման հետազոծը՝ այսպիսով դառնալով ուսման որոշման արդյունքը ձևավորող ակտիվ մասնակից: Բուհում իրականացվող ուսուցման երկաստիճան համակարգը (բակալավրիատ, մախստրատորա) հիմնավորված կերպով թեթևացրել է ուսանողի լսարանային ծանրաբեռնվածությունը՝ մեծ տեղ հատկացնելով ուսանողի ինքնուրույն ու ստեղծարժ աշխատանքին: Մասնագիտական պարտադիր առարկաներին զուգընթաց՝ ուսանողը հնարավորություն ունի, ըստ նախասիրությունների, ընտրելու այլ առարկաներ:

Բարեփոխումների այս շրթան շարունակական բնույթ է կրելու, և տարեցտարի մեր ուսանողության համար ստեղծվելու են ուսումնական գործընթացի առավել շահավետ պայմաններ և ընտրության ավելի լայն հնարավորություններ:

Մույն ուղեցույցը կօգնի ձեզ պատկերացում կազմելու կրեդիտային համակարգի հիմնադրույթների և ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ, ծանոթանալու գիտելիքների ստուգման ու գնահատման համակարգին, ձեզ առաջարկվող կրթական ծրագրերին, դրանց կառուցվածքին ու բովանդակությանը, աշխատածավալներին ու ծրագրի բաղկացուցիչ դասընթացներին և դրանցով պայմանավորված կրթական արդյունքներին:

Մաղթում եմ արդյունավետ ուսումնառություն և ամենայն բարիք:

Ռեկտոր՝

Գ. Խաչատրյան

I. Կրեղիտային համակարգի հիմնադրույթները

Կրեղիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեղիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեղիտների անհրաժեշտ քանակի և բովանդակության ձեռքբերումից հետո:

Կրեղիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեղիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը մեկ ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեղիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռքբերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեղիտների անհրաժեշտ քանակը,
- կրեղիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեղիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և տեղեկատվական այլ նյութեր հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ՎՊՄԻ կայքէջում):

Ակադեմիական կրեղիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնա-կան բեռնվա-ծքի չափման համընդունելի պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

Ակադեմիական ECTS կրեղիտի կարևորագույն հատկանիշներն են.

- ECTS կրեղիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային և արտալսարանային (նաև ինքնուրույն իրականացվող) բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանց հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
- Լսարանային բեռնվածություն- ուսումնական աշխատաժամանակի բաղադրիչ, որն ընդգրկում է ուսումնառության կազմակերպման լսարանային ձևերի բոլոր տեսակները՝ դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ:
- Արտալսարանային բեռնվածություն - ուսանողի կողմից ինքնուրույն կամ դասախոսի հսկողությամբ կատարվող աշխատանքի համար հատկացվող

Ժամանակ՝ հանձնարարված գրականությունն ուսումնասիրելու և մշակելու, գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքներին, ընթացիկ և կիսամյակային քննություններին նախապատրաստվելու, կուրսային, դիպլոմային աշխատանքները կատարելու համար:

- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին հատկացվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափում է գնահատականով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործություն չկա:

II. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և մագիստրոսական ծրագրի աշխատանքային ծավալը

1. ՎՊՄԻ-ում մագիստրոսի կրթական աստիճանում առկա ուսուցմամբ ուսանողի ուսումնական կիսամյակի բեռնվածությունը սահմանվում է 30 կրեդիտային միավոր, ուսումնական տարվա բեռնվածությունը՝ 60 կրեդիտային միավոր (տարեկան ուսումնական բեռնվածությունը՝ 1800 ակադեմիական ժամ):

2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

3. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածությունը գնահատվում է 1,5 կրեդիտային միավորով, ինչը կազմում է 45 ակադեմիական ժամ (40 ընդհանուր և 5 շաբաթական պարապմունքների դեպքում՝ 51 ակադեմիական ժամ):

4. Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով (աշնանային և գարնանային):

5. 1-ին և 2-րդ ուսումնական կիսամյակների տևողությունը կազմում է 20 շաբաթ, որից տեսական ուսուցում՝ 17 շաբաթ, քննաշրջան՝ 3 շաբաթ: Ուսումնառության 3-րդ կիսամյակի տևողությունը 20 շաբաթ է, որոնցից 13 շաբաթ՝ տեսական ուսուցում, 4 շաբաթ՝ մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա, 3 շաբաթ՝ քննաշրջան:

4-րդ կիսամյակի տևողությունը 19 շաբաթ է (8 շաբաթ՝ տեսական ուսուցում, 2 շաբաթ՝ գիտահետազոտական պրակտիկա, 1 շաբաթ՝ քննաշրջան, 8 շաբաթ՝ մագիստրոսական թեզի նախապատրաստում և պաշտպանություն):

6. Մագիստրոսի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 15-22 ժամ:

7. Մագիստրատուրայի համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

8. Մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 120 կրեդիտային միավոր:

9. Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը որոշ դեպքերում սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն:

10. Դասընթացները և կրթական մոդուլները

10.1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

10.2. Մեծածավալ դասընթացները բաժանվում են մեկ կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

10.3. Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են երկու հիմնական խմբերի՝

ա) պարտադիր դասընթացներ - բարձրագույն կրթության կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրի հիմնական դասընթացներ (կրթական մոդուլներ), որոնք յուրացվում են պարտադիր և խիստ որոշակի հերթականությամբ՝ համաձայն տվյալ ուղղության մասնագետների պատրաստմանը ներկայացվող պահանջներին:

բ) կամընտրական դասընթացներ, որոնք լրացնում են հիմնական կրթական ծրագիրը՝ մագիստրանտների մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները տվյալ մասնագիտացման կոնկրետ ոլորտում խորացնելու, շարունակական կրթության և տվյալ մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության երրորդ աստիճանին նախապատրաստելու նպատակով:

Կամընտրական դասընթացների քանակը չպետք է լինի երեքից պակաս:

Դասընթացների ցանկն առաջարկում են համապատասխան ամբիոնները:

Այն հաստատվում է գիտխորհրդի կողմից՝ ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի (ամբիոնի) ներկայացմամբ:

Կամընտրական դասընթացների անցկացման հաջորդականությունը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

III. Մագիստրոսի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

3.1. Մագիստրոսի կրթական ծրագիրը բաղկացած է երկու հիմնական հատվածներից՝ ուսումնական ծրագրից և գիտահետազոտական աշխատանքից: Ուսումնական ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական կրթամասերից՝

- Ընդհանուր դասընթացներ,
- Մասնագիտական պարտադիր դասընթացներ,
- Կամընտրական դասընթացներ,
- Մանկավարժական առարկաներ,
- Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա:

Կրթական ծրագրի գիտահետազոտական կրթամասը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- Մագիստրոսական ծրագրի ղեկավարի սեմինար,
- Գիտահետազոտական պրակտիկա,
- Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական թեզի թեմայով,
- Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն:

Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր դասընթացն ունի իր դասիչը: Ծրագրում նշվում է նաև դասընթացների յուրաքանչյուր խմբին, ինչպես նաև յուրաքանչյուր մոդուլին հատկացված կրեդիտային միավորը, ինչպես նաև առարկայի դասավանդման կիսամյակը և նախապայմանները:

Ուսումնական ծրագրի ընդհանուր կառուցվածքը հետևյալն է.

h/h	Կրթական ծրագրի բաղադրամասը	Կրեդիտներ	Դասընթացների քանակը
1	Ընդհանուր դասընթացներ	14	
	-պարտադիր	14	4
	- լրացական դասընթաց օտար լեզվից	-	1
2	Մասնագիտական պարտադիր դասընթացներ	48	10
3	Կամընտրական դասընթացներ	12	4
	-հայոց լեզվից	6	2
	-հայ գրականությունից	6	2
4	Մանկավարժական առարկաներ	8	2
5	Մանկավարժական պրակտիկա	6	
6	Գիտահետազոտական աշխատանք	32	
6.1	Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար	8	
6.2	Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով	9	
6.3	Գիտահետազոտական պրակտիկա	3	
6.4	Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն	12	
Ընդամենը		120	

IV. Կրթական ծրագրի ուսումնական հատված

4.1. Ընդհանուր դասընթացներ

Տվյալ ենթաբաժնի դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլ-դասընթացները.

Առարկայի կոդը	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ընդհանուր ժամաքանակ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ) ¹	Ինքնուրույն աշխատանքի ժամաքանակ	Կիսամյակ	Գնահատման ձևը
ԻՏՄՄ/մ-0673	<i>Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում</i>	3	90	40 (14/ 0/26/ 0)	50	3	ստուգաք

S/մ-0563	Կրթական հաստատությունների կառավարում և շուկայագիտություն	4	120	40 (26/0/14/0)	80	1	քննություն
S/մ-0563	Կրթական հաստատության կառավարման իրավական հիմունքները	4	120	40 (26/0/14/0)	80	3	քննություն
S/մ-1263	Մասնագիտության արդի հիմնախնդիրները ¹	3	90	30(20/0/10/0)	60	3	քննություն
Օլ/մ-0148	Օտար լեզու ²	-	32	32 (0/0/32/0)	-	1	ստուգարք

¹դ-դասախոսություն, ս-սեմինար, գ-գործնական պարապմունք, լ-լաբորատոր աշխատանք

²Անգլերեն կամ գերմաներեն կամ ֆրանսերեն:

4.2. Մասնագիտական պարտադիր դասընթացներ

«Հայոց լեզու և գրականություն» մագիստրոսական ծրագրի մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամասի փաթեթը ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլ-դասընթացները.

Առարկայի կոդը	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ընդհանուր ժամաքանակ	Լսարանա- ժամ (դ/ս/գ/լ) ¹	Ինքնու- ղույն աշխատանքի ժամաքանակ	Կիսամ- յակ	Գնահատման ձևը
Գ/մ 0230	Արդի հայ գրականության զարգացման առանձնահատկությունները	5	150	50(36/0/14/0)	100	2	քննություն
Գ/մ-0241	Միմլոլիզմը հայ գրականության մեջ	5	150	50(36/0/14/0)	100	2	քննություն
Գ/մ- 0224	Գրականագիտական և գեղագիտական կատեգորիաներ	4	120	40(28/0/12/0)	80	1	քննություն
Գ/մ-0242	Թարգմանության տեսություն և գործընթաց	3	90	30(20/0/10/0)	60	3	քննություն
	20-րդ դարի 60-80-ական թթ. հայ արձակի տեսություն	3	90	30(20/0/10/0)	60	3	քննություն
Գ/մ- 0223	Հայ հին և միջնադարյան գրականության տեսություն	4	120	40(28/0/12/0)	80	1	քննություն
Հլ/մ-0044	Հայոց լեզվի տեսություն	3	90	30(20/0/10/0)	60	1	քննություն
Հլ/մ-0046	Ժամանակակից	5	150	50(36/0/14/0)	100	2	քննություն

	<i>հայերենի բառագիտության և քերականության հարցեր</i>						
<i>Հ/մ-0043</i>	<i>Միջին հայերեն</i>	<i>4</i>	<i>120</i>	<i>60(8/0/52/0)</i>	<i>60</i>	<i>4</i>	<i>քննություն</i>
<i>Հ/մ-0045</i>	<i>Արդի ոճագիտության հիմնահարցեր</i>	<i>4</i>	<i>120</i>	<i>42(24/0/18/0)</i>	<i>78</i>	<i>4</i>	<i>քննություն</i>
<i>Հ/մ-0047</i>	<i>Տիպաբանություն: Հայերենի տիպաբանության հարցեր</i>	<i>3</i>	<i>90</i>	<i>32(18/0/14/0)</i>	<i>58</i>	<i>3</i>	<i>քննություն</i>
<i>Հ/մ-0042</i>	<i>Ընդհանուր լեզվաբանություն</i>	<i>5</i>	<i>150</i>	<i>50(36/0/14/0)</i>	<i>100</i>	<i>5</i>	<i>քննություն</i>

4.2.1. Կամընրտական դասընթացներ

Պարտադիր մասնագիտական դասընթացների կրթամասի կամընտրական դասընթացների ցանկը ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլներ*.

Առարկայի կոդը	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ընդհանուր ժամաքանակ	Լսարանային ժամ(դ/ա/գ/լ)¹	Ինքնուրույն աշխատանքի ժամաքանակ	Կիսամյակ	Գնահատման ձև
	<i>Աստվածաշունչը և հայ գրականությունը</i>	<i>3</i>	<i>90</i>	<i>30(20/0/10/0)</i>	<i>60</i>	<i>2</i>	<i>քննություն</i>
	<i>Գրականությունը համացանցում</i>						
	<i>Փոքր արձակի ժանրերի զարգացման տեսություն</i>						
	<i>Աղբյուրագիտություն</i>	<i>3</i>	<i>90</i>	<i>30(20/0/10/0)</i>	<i>60</i>	<i>4</i>	<i>քննություն</i>
	<i>Հայ դրամատուրգիայի պատմություն</i>						
	<i>Հնախոսական պատկերացումը հայ հին և միջնադարյան գրականության համարնագրում</i>						
	<i>Բանահյուսության տեսություն</i>						
	<i>Գրականագիտության արդի փուլը</i>	<i>3</i>	<i>90</i>	<i>30(20/0/10/0)</i>	<i>60</i>	<i>1</i>	<i>քննություն</i>
<i>Հ/մ-0048</i>	<i>Բայի արժույթը</i>						
<i>Հ/մ-0049</i>	<i>Խոսքի մասերի կապակցելիությունը հայերենում</i>						
<i>Հ/մ-0056</i>	<i>Լեզվանշանագիտություն և</i>						

	<i>լեզվախմաստասիրություն</i>						
<i>Հ/մ-0050</i>	<i>Նորաբանությունները հայերենում</i>						
<i>Հ/մ-0055</i>	<i>Լեզվաբանական համամարդկային գիտակարգեր Նախագրային հայերեն Արդի լեզվաբանության հարցեր</i>	<i>3</i>	<i>90</i>	<i>30(20/0/10/0)</i>	<i>60</i>	<i>3</i>	<i>քննություն</i>

*նշված առարկաներից ընտրվում է մեկ առարկա:

4.2. 2. Մանկավարժական դասընթացներ

Մագիստրոսի կրթական ծրագրով նախատեսված մանկավարժական դասընթացների կրթամասը պայմանավորված է շրջանավարտի «Մանկավարժության մագիստրոս» որակավորումով և բաղկացած է մանկավարժական առարկաների փաթեթից ու «Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա» բաղադրիչից:

Մանկավարժական առարկաների կրթամասը ներառում է հետևյալ մոդուլ-դասընթացները.

Առարկայի կոդը	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ընդհանուր ժամաքանակ	Լսարանային ժամ(դ/ս/գ/լ) ¹	Ինքնուրույն աշխատանքի ժամաքանակ	Կիսամյակ	Գնահատման ձև
<i>Մ/մ-0287</i>	<i>Բարձրագույն դպրոցի մանկավարժություն և հոգեբանություն</i>	<i>4</i>	<i>120</i>	<i>40(26/014/0)</i>	<i>80</i>	<i>1</i>	<i>քննություն</i>
	<i>Բարձրագույն դպրոցի դասավանդման մեթոդիկա</i>	<i>4</i>	<i>120</i>	<i>40(26/014/0)</i>	<i>80</i>	<i>2</i>	<i>քննություն</i>

4.2.3. Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա

Ոչ դասընթացային կրթական մոդուլ՝ ամրագրված կրեդիտային միավորներով.

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձև
<i>Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա</i>	<i>6</i>	<i>3</i>	<i>քննություն</i>

4.3. Գիտահետազոտական աշխատանք

Մագիստրոսական կրթական ծրագրի գիտահետազոտական հատվածն ընդգրկում է ամրագրված կրեդիտային միավորներով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
4.3.1. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար	8	1,2,3,4	ստուգարք
1. Ռեֆերատ		1	ստուգարք
2. Կուրսային աշխատանք		2	Դիֆերենցված ստուգարք
3. Գիտական զեկուցում		3	ստուգարք
4. Պրեզենտացիա՝ մագիստրոսական ատենախոսության թեմայով		4	ստուգարք
4.3.2. Գիտահետազոտական աշխատանք՝ մագիստրոսական ատենախոսության թեմայով	9	2,3,4	ստուգարք
4.3.3. Գիտահետազոտական պրակտիկա	3	4	ստուգարք
4.3.4. Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն	12	4	Պաշտպանություն՝ գնահատականով

4.4. Ավարտական պահանջներ

4.4.1. Ընդհանուր ավարտական պահանջներ

1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ՎՊՄԻ մագիստրատուրայի ուսանողը պետք է հաջողությամբ յուրացնի 120 կրեդիտին համապատասխանող կրթական ծրագրի բոլոր բաղադրիչները, ընդ որում հաշվարկված միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 58՝ ներառյալ մագիստրոսական թեզի ձևակերպումը և պաշտպանությունը:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մագիստրատուրայի ուսանողները պարտավոր են կուտակել.

- 14 կրեդիտ ընդհանուր դասընթացների կրթամասից,
- 4 կրեդիտ «Մանկավարժական առարկաներ» կրթամասից,
- 6 կրեդիտ մանկավարժական (գիտամանկավարժական)պրակտիկայից:

4.4.2. Մասնագիտական ավարտական պահանջներ

Մնացած 96 կրեդիտային միավորներից 32-ը տրամադրվում է մագիստրոսական կրթական ծրագրի «Գիտահետազոտական աշխատանք» կրթամասով նախատեսված բաղադրիչներին, իսկ 64 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներից և մասնագիտացման չափորոշիչներով սահմանված կարողությունների, հմտությունների և կոմպետենցիաների ձեռքբերման պայմանից, որն ապահովվում է ՄՊԴ և ՄԱ կրթամասերի (տե՛ս կետեր 4.2. և 4.3.) առաջարկվող առարկայացանկերով:

5. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

5.1. Համակարգի հիմնադրույթները

ՎՊՄԻ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ , որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,

բ) անհատական առաջադրանքների և ընթացիկ ստուգումների (քննությունների) օգնությամբ բարելավել դասընթացի արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը՝ գիտելիքների գնահատման ընթացքում հաշվի առնելով ուսումնական գործընթացի մի շարք բաղադրիչների և դրանց կարևորության աստիճանը:

Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի բաղադրիչներն են՝

ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,

բ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում և գնահատում,

գ) գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության, պարապմունքների ընթացքում նրա ակտիվության, հմտությունների և կարողությունների հաշվառում և գնահատում,

դ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգումներ),

ե) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,

զ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական(սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների գնահատման, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

5.2. Գնահատման մեթոդաբանությունը

5.2.1. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (կրթական մոդուլների) աշխատաձևավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման գործում՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) եզրափակիչ գնահատումով դասընթացներ,

բ) առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:

Եզրափակիչ գնահատումով (քննությամբ) ավարտվում են ծրագրի մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամասի բոլոր առարկաները և այն դասընթաց-մոդուլները, որոնց լսարանային ժամաքանակը կիսամյակում կազմում է առնվազն 30 ժամ (որից առնվազն 20 ժամը դասախոսություն է): Այս կրթամասերի մնացած բոլոր դասընթացներն ավարտվում են ստուգարքով: Յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում ներառված են եզրափակիչ գնահատումով մինչև 4 մասնագիտական դասընթաց:

5.2.2. Եզրափակիչ քննությամբ ավարտվող առարկաների համար քննաշրջանի ընթացքում նախատեսվում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն: Ընթացիկ քննությունները պարտադիր կերպով անցկացվում են գրավոր, իսկ եզրափակիչ քննության ձևը որոշում է դեկանը՝ ամբիոնի առաջարկությամբ:

5.2.3. Առանց եզրափակիչ գնահատման (ստուգարքով ավարտվող) դասընթացը կիսամյակի ընթացքում գնահատվում է նյութի յուրացման մակարդակը որոշող 2 (երկու) ընթացիկ ստուգումների արդյունքներով: Ընթացիկ ստուգումներն անցկացվում են կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների, անհատական առաջադրաքների (ռեֆերատ, էսսե և այլն) և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականների ստուգման միջոցով:

Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը վարող ամբիոնը:

Լաբորատոր աշխատանքներն ամփոփվում են կատարողական ստուգարքով:

5.2.4. Եզրափակիչ գնահատումով դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունաբար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գ_{արդ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ_{մաս.}, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 20 միավոր: Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանը գնահատվում է հետևյալ սանդղակով.

Աղյուսակ 1.

Ուսանողի մասնակցության աստիճանի որոշման սանդղակ

Մասնակցության աստիճանը (%)	Հատկացվող միավորը
90-100	20
80-90	16
70-80	10
60-70	4
50-60	2
< 50	0

բ) Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Գ_{ինք.}, որին հատկացվում է 10 միավոր: Ինքնուրույն աշխատանքի ձևերից են ռեֆերատը, էսսեները, քեյսերը, թեմատիկ զեկուցումները, հանձնարարված մասնագիտական գրականության մշակումները, արտալսարանային ընթերցանությունը և այլն: Եթե ինքնուրույն աշխատանքը կատարված է նշանակված ժամանակահատվածում և ուսանողը խմբի ներկայությամբ կարողանում է այն բանավոր ներկայացնել, ապա նա կարող է ստանալ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առավելագույն միավորը: Առանց բանավոր ներկայացման ուսանողը ստանում է նախատեսված միավորների կեսը:

գ) Գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցությունը, պարապմունքների ընթացքում նրա ակտիվությունը և

հմտությունները ($Q_{սեմ.}$) գնահատվում են 20 միավորով: Գործնական (սեմինար) և լաբորատոր պարապմունքները կրթական գործընթացի կարևորագույն տարրերից են: Այդ պարապմունքների ընթացքում ուսանողի ակտիվությունը գնահատվում է դասախոսի կողմից և արձանագրվում է մատյաններում՝ յուրաքանչյուր դասաժամին հատկացված միավորներով: Նշված պարապմունքներին հատկացված առավելագույն միավորները ուսանողները կարող են ստանալ այն դեպքում, եթե պատրաստվել և ակտիվորեն մասնակցել են դրանց:

դ) Ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) դրական գնահատված քննությունների միջինի և եզրափակիչ քննության գումարային արդյունքից ($Q_{քնն.}$), որի առավելագույնը 20 միավոր է:

ե) Տվյալ դասընթացի (ուսումնական մոդուլի) ուսուցման ընթացքում ուսանողի ձեռքբերած հմտությունների ($Q_{հմտ.}$) և կարողությունների ($Q_{կար.}$) գնահատումից, որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 15 միավոր: Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը (միավորը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Q_{արդ.} = Q_{մաս.} + Q_{ինք} + Q_{սեմ} + Q_{քնն.} + Q_{հմտ.} + Q_{կար.}$$

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 16 միավոր, ինքնուրույն աշխատանքը՝ 5 միավոր, գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքները՝ 17 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից ուսանողը վաստակել է համապատասխանաբար 8 և 12 միավորներ, եզրափակիչ քննությանը՝ ընթացիկների միջինը (10) բարձրացրել է մինչև 16 միավոր, իսկ հնտություններն ու կարողությունները գնահատվել են համապատասխանաբար 8 և 10, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝

$$Q_{արդ.} = Q_{մաս.} + Q_{ինք} + Q_{սեմ} + Q_{քնն.} + Q_{հմտ.} + Q_{կար.}$$

$$Q_{արդ.} = 16 + 5 + 17 + 16 + 8 + 10 = 72,$$

որն ըստ սույն տեղեկագրքի 4.4.1. կետում բերված աղյուսակի համապատասխանում է B- (լավ) գնահատականի:

5.2.5. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը (միավորը) ($Q_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ $Q_{մաս.}$, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 20 միավոր: Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն աղյուսակ 1-ում բերված սանդղակի:

բ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ $Q_{ինք.}$, որին հատկացվում է մինչև 10 միավոր:

գ) գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության ակտիվությունից ($Q_{սեմ.}$), որը գնահատվում է առավելագույնը 20 միավորով:

դ) ուսանողի կողմից ուսուցանվող նյութի յուրացման աստիճանի ստուգման, ձեռք բերված գործնական հմտությունների ու կարողությունների գնահատման նպատակով անցկացվող 2-4 ընթացիկ ստուգումների արդյունքներից ($Q_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 20 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը (միավորը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Q_{արդ} = Q_{մաս} + Q_{ինք} + Q_{սեմ} + Q_{ընթ}:$$

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 8 միավոր, ինքնուրույն աշխատանքները՝ 10 միավոր, գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվությունը՝ 15 միավոր, իսկ դասընթացի համար նախատեսված 4 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 8, 10, 13 և 14 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝

$$Q_{արդ} = 8+10+15+8+10+13+14 = 78:$$

Ուսանողը գնահատվում է S (ստուգված) (տես 4.4.1. կետի աղուսյակը):

5.2.6. Դասընթացների գնահատման վերը նկարագրված եղանակները կիրառվում են միայն մասնագիտական դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար: Մնացած բոլոր կրթամասերի բաղկացուցիչ դասընթացների գնահատումն իրականացվում է ավանդական եղանակով (ստուգարք կամ 100 միավորանոց սանդղակով գնահատվող եզրափակիչ քննություն):

5.2.7. Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկան գնահատվում է գնահատվող ստուգարքի, իսկ գիտահետազոտական պրակտիկան՝ ստուգարքի ձևով:

5.2.8. Քննության գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ երկօրյա ժամկետում դիմելու դասընթացը վարող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:

5.3. Կիրարկման ընթացակարգը

5.3.1. Ընթացիկ և եզրափակիչ ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

5.3.2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում և հաստատվում ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:

5.3.3. Ընթացիկ քննություններն անցկացվում են ուսումնատրության կիսամյակի 7-8-րդ և 15-16-րդ շաբաթներում (3-րդ կիսամյակում՝ 5-րդ և 10-րդ շաբաթներում):

5.3.4. Ստուգարքով ավարտվող առարկաների ընթացիկ ստուգումներն անցկացվում են յուրաքանչյուր 4 շաբաթը մեկ (3-րդ կիսամյակում՝ յուրաքանչյուր 2 շաբաթը մեկ): Ընթացիկ ստուգումն անցկացվում է տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից՝ դասացուցակով առարկային հատկացված ժամերին (ուսանողը դասերից չի ազատվում):

5.3.5. Եզրափակիչ քննություններն անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 18-20-րդ շաբաթներում:

5.4. Գնահատման սանդղակը և նշագրումը

5.4.1. ՎՊՄԻ-ում մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Գնահատականը ըստ 5 բալանոց համակարգի	Գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի	Գնահատականը ըստ ECTS համակարգի
«գերազանց (5)»	96-100	A+
« գերազանց » (5)	91-95	A
« գերազանց » (5)	86-90	A-
« լավ » (4)	81-85	B+
« լավ » (4)	76-80	B
« լավ » (4)	71-75	B-
« բավարար » (3)	67-70	C+
« բավարար » (3)	62-66	C
« բավարար » (3)	58-61	C-
« անբավարար » (2) ¹	30-57	D
« Անբավարար » (2) ²	մինչև 30	F
« ստուգված »	58-100	S
« չստուգված » ¹	30-57	U
« չստուգված » ²	մինչև 30	U

¹ Թույլատրվում է մասնակցել քննության պարտքերի մարմանը

² Չի թույլատրվում մասնակցել պարտքերի մարմանը:

5.4.2. Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում արդյուն-նարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը, օրինակ՝ 87 (գերազանց):

5.4.3. Այն դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է 'չստուգված', կրեդիտներ չեն տրվում: Ստուգված գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

6. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

6.1. Մագիստրատուրայի ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ՎՊՄԻ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

6.2. Մագիստրատուրայի ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

6.3. Մագիստրատուրայի ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և միջև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- Ծրագրային կրեդիտների (ՄԿ) քանակը
- Գնահատման կրեդիտների (ԳԿ) քանակը
- Վարկանիշային միավորները (ՎՄ)
- Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)

6.4. Ծրագրային կրեդիտը (ՄԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

6.5. Գնահատման կրեդիտը (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

$$\text{ԳԿ} = \Sigma \text{Կրեդիտ}$$

6.6. Վարկանիշային միավորը (ՎՄ) ուսանողի՝ յուրաքանչյուր առարկայի համար գնահատման ECTS համակարգով ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար ECTS գնահատականների արտադրյալների գումար.

$$\text{ՎՄ} = \sum_{i=0}^k (\text{ԳԿ} \times \text{ԹԳ})$$

որտեղ ԹԳ-ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS գնահատականն է: Օրինակ, եթե 5-կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 72 (ECTS-համակարգում՝ B- լավ), ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է 5 կրեդիտ $\times 72 = 360$ ՝ 500 հնարավորից:

6.7. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ուսանողի՝ բոլոր առարկաների համար գնահատման ECTS համակարգով ստացած գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\Sigma \text{ԳԿ}}$$

6.8. Մագիստրատուրայի ուսանողի կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը հաշվառվում և գրանցվում են ակադեմիական տեղեկագրում:

7. Ուսման առաջադիմությունը

- 7.1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա:
- 7.2. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝
- ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածության (10% թույլատրելի շեղումով),
 - բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները,
 - գ) ապահովել է բակալավրի կրթական աստիճանում ուսանողի համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմը (58 միավոր):
- 7.3. Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված երեք պայմաններից որևէ մեկը:
- 7.4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:
- 7.5. Մագիստրոսի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանին:
- 7.6. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից:
- 7.7. Ուսանողական նպաստներ, պետական, ներքուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս միննույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են նրանց վարկանիշային միավորների օգնությամբ:
- 7.8. Ուսանողի բացարձակ առաջադիմությունը չափվում է միջին որակական գնահատականով:

8. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

- 8.1. Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:
- 8.2. Հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը հաշվի չեն առնվում դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- 8.3. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:
- 8.4. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողն այն կարող է վերահանձնել մինչև հաջորդ ընթացիկ քննությունը (ստուգումը) ընկած ժամանակահատվածում՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի և պարապոդ դասախոսի հետ:
- 8.5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ քննաշրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:
- 8.6. Եզրափակիչ քննությունից անբավարար (8 միավորից ցածր) գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել

այն, եթե տվյալ դասընթացից նրա արդյունարար գնահատականը ցածր է Բավարար՝ գնահատականից (գտնվում է 30-57 միջակայքում):

8.7. Մահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 58 միավորը չհավաքած ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում, սակայն չեն կարող վաստակել ավելի, քան անցողիկ 58 միավորը:

8.8. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակը ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

9. Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

9.1. Մագիստրատուրայի ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (մագիստրոսական թեզի) կատարումով ու պաշտպանությամբ:

9.2. Մագիստրոսական թեզով նախատեսված աշխատանքները կատարվում են ուսումնառության 2-4 կիսամյակներում՝ ստացված գիտելիքների և գործնական հմտությունների հիման վրա՝ բուհում սովորելու ընթացքում (4 տարի բակալավր, 2 տարի մագիստրոս):

Մագիստրոսական ատենախոսության թեմաները և ղեկավարները որոշվում են թողարկող ամբիոնի կողմից՝ ըստ մագիստրոսական ծրագրերի ուղղությունների, համաձայնեցվում մագիստրոսական ծրագրի ղեկավարի հետ, քննարկվում ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդում և ուսումնառության առաջին կիսամյակի վերջում առաջարկվում ուսանողներին:

Մագիստրատուրայի ուսանողը առաջին կիսամյակի վերջին գրավոր դմում է ներկայացնում համապատասխան թողարկող ամբիոնի վարիչին՝ մագիստրոսական ատենախոսության թեման և ղեկավարի հաստատման խնդրանքով:

9.3. Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա) թեզի ներկայացումը մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ) թեզի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում մասնագիտացնող ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ) մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) կողմից աշխատանքը գրախոսման ուղարկելու կազմակերպում,

դ) մագիստրոսական թեզի պաշտպանություն պետական քննական հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

9.4. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը գնահատվում է ըստ 5.4.1. կետում ներկայացված 100-բալանոց սանդղակով:

9.5. Մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման հետևյալ միավորները.

Թիվ	Չափանիշ	Հատկացվող առավելագույն միավորը
1	Ներկայացման որակը	30
2	Ձևակերպման որակը	20
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	30
4	Արդիականությունը (նորույթը)	20
	Ընդամենը	100

10. Կրեդիտների փոխանցումը

10.1. Այլ բուհերից ՎՊՄԻ–ի մա՛խստրատուրայի կրթական ծրագիր փոխադրվելու դեպքում փոխանցելի են տվյալ բուհում առանձին դասընթացներից, դասընթացների խմբից, կամ ուսումնառության որոշակի շրջանից կուտակված կրեդիտները: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ և ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

10.2. Այլ ուսումնական ծրագրից ՎՊՄԻ մագիստրոսի ուսումնական ծրագիր կրեդիտների փոխանցումը հնարավոր է, եթե.

ա) փոխանցվող կրեդիտները կուտակվել են ՎՊՄԻ մա՛խստրոսական ծրագրի բաղադրիչներին համապատասխանող դասընթացներից և այլ կրթական մոդուլներից,

բ) կան կուտակված կրեդիտներին համապատասխանող կրթական ծրագրերի բաղադրամասերի բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են կուտակված կրեդիտներին համապատասխանող կրթական ծրագրերի բաղադրամասերի բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

10.3. Այլ բուհում ՎՊՄԻ մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՎՊՄԻ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

10.4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման հարցերով զբաղվում է ՎՊՄԻ-ի ուսումնամեթոդական վարչությունը:

11. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի պարտականությունները

11.1. Կրեդիտային համակարգով մագիստրատուրայում սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը նշանակում է մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներից:

11.2. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը պատասխանատու է մագիստրոսի պատրաստման որակի համար:

11.3. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը վերահսկում է մագիստրոսական ուսումնական պլանի մշակումը, մասնակցում է դրա մասնագիտական

առարկայախմբի բովանդակության ձևավորմանը, վարում է ուսումնական պլանով նախատեսված մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինարը, անցկացնում է այդ սեմինարի պլանին և ծրագրին համապատասխանող ուսումնական պարապմունքներ, վերահսկում է մագիստրոսի գիտահետազոտական աշխատանքի կատարումը:

11.4. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը իրականացնում է մագիստրոսական ծրագրի ուսումնական և գիտահետազոտական հատվածների կատարման և մագիստրատուրայի գիտական ղեկավարների գործունեության վերահսկողությունը, կազմակերպում է մագիստրոսական թեզերի թեմաների փորձաքննական գնահատում:

11.5. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը ներկայացնում է ուսանողի շահերը Բնստիտուտի տարբեր ստորաբաժանումներում, կազմակերպում է խմբային և անհատական խորհրդատվություններ ուսանողների համար՝ ուսումնական գործընթացին վերաբերող տարբեր հարցերի շուրջ:

12. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

12.1. Մագիստրատուրայի ուսանողը պարտավոր է.

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

12.2. Ուսանողն իրավունք ունի.

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Բնստիտուտի կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) սովորելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթերի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի ECTS հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

13. ՎՊՄԻ մագիստրատուրայի ուսումնական օրացույցը

2013-2014 ուսումնական տարի

Աշնանային կիսամյակ

09 սեպտեմբերի 2013թ.– 27 հունվարի 2014թ.	
Ուսուցման սկիզբ	09 սեպտեմբերի
1-ին փուլի ընթացիկ քննություններ	13-24 հոկտեմբերի
2-րդ փուլի ընթացիկ քննություններ	22-26 դեկտեմբերի
Ստուգարքների հանձնում	22-26 դեկտեմբերի
Ուսուցման ավարտ	26 դեկտեմբերի
Քննաշրջան	03 հունվարի - 27 հունվարի
Ձմեռային արձակուրդներ	28 հունվարի – 07 փետրվարի

Գարնանային կիսամյակ

09 փետրվարի 2014թ. – 2 հունիսի 2014թ.	
Ուսուցման սկիզբ	09 փետրվարի
1-ին փուլի ընթացիկ քննություններ	23 մարտի- 03 ապրիլի
2-րդ փուլի ընթացիկ քննություններ	18 մայիսի – 29 մայիսի
Կուրսային աշխատանքների հանձնում	01- 05 հունիսի
Ուսուցման ավարտ	05 հունիսի
Քննաշրջան	08-29 հունիսի
Ավարտական աշխատանքների պաշտպանություն	27 ապրիլի- 30 մայիսի
Ամառային արձակուրդներ	01 հուլիսի-34 օգոստոսի

ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. Տեղեկագրքի նպատակը

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է բանասիրական ֆակուլտետում իրականացվող հայոց լեզվի և գրականության մագիստրոսի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հասարակությանը մատչելի դարձնելու համար: Տեղեկագիրքը պարունակում է ամփոփ

տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված էլքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

031000 «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրոսական ծրագրի տեղեկագիրք

1. Ընդհանուր դասընթացների (ԸԴ) կրթամաս (14 կրեդիտ)

1.1. ԻՏՄՄ/մ–0677

Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (17 ժամ դասախոսություն, 22 ժամ լաբորատոր աշխատանք), 1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը

- ✓ Ուսանողներին զինել բանասիրական գիտությունների բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող գիտելիքներով:
- ✓ Խորացնել և ընդլայնել ուսանողների՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտին վերաբերվող ընդհանուր տեսական և պրակտիկ գիտելիքները:
- ✓ Ուսանողներին տալ գաղափարներ՝ ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների ու ինֆորմացիոն համակարգերի, դրանց աշխատանքի սկզբունքների, ինչպես նաև մարդկային գործունեության տարբեր ոլորտներում կիրառության վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

✓ կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել պրակտիկ խնդիրներ լուծելիս,

✓ կկարողանա տիրապետել ինֆորմացիոն որոնողական համակարգերի կիրառության մեթոդներին:

Բովանդակությունը.

Ինֆորմացիոն տեխնոլոգիաները, նրանց բնույթը, զարգացման հիմնական փուլերը:

Թեմա 1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ: Հիմնական գաղափարներ ու հասկացություններ: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման հիմնական պատմական էտապներն ու ժամանակակից մակարդակը:

Թեմա 2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեխնիկական, մեթոդոլոգիական ու կիրառական հիմունքները: Ինֆորմացիոն տեխնոլոգիաներն ու կիրառական, ինֆորմատիկական ու հաշվողական տեխնիկան:

Ինֆորմացիոն և կոմունիկացիոն տեխնոլոգիաներն ըստ նրանց կիրառության հիմնական բնագավառները

Թեմա 1. Ինֆորմացիան որպես ինֆորմացիոն տեխնոլոգիաների կարևորագույն բաղկացուցիչ մաս, նրա ձևավորման, կարգավորման, կազմակերպման, մշակման, հաղորդման ու պահման մեթոդներն ու եղանակները:

Թեմա 2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը հասարակական գործունեության տարբեր բնագավառներում (գիտություն, արտադրություն, կրթություն, տրանսպորտ ու կապ, բիզնես, մարքեթինգ և այլն):

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը կրթության և մասնագիտական տարբեր ոլորտներում

Թեմա 1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը կրթության պրոցեսի կառավարման ու կազմակերպման գործում:

Թեմա 2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը տվյալ մասնագիտության գծով հեռաուսուցման, ծրագրավորված և էլեկտրոնային ուսուցման կազմակերպման գործում:

Թեմա 3. Ուսուցման և գիտելիքների գնահատման համակարգչային ավտոմատացված ուսուցանող համակարգեր:

Թեմա 4. Բանասիրական գիտությունների բնագավառի որոշ տվյալների ու գիտելիքների բազաների նախագծումը, մշակումն ու շահագործումը:

Թեմա 5. Ինֆորմացիոն ցանցեր և դրանցում ինֆորմացիայի կազմակերպման ու որոնման եղանակները: INTERNET միջազգային գլոբալ ինֆորմացիոն ցանցն ու նրանում ինֆորմացիայի որոնման համակարգերը:

1.2. Կրթական հաստատությունների կառավարման իրավական հիմունքներ (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (26 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական), 1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը՝ տալ համապատասխան գիտելիքներ հանրակրթության բնագավառի, ժողովրդավարական կառավարման սկզբունքների, ընթացիկ գործունեության ղեկավարման, կոլեգիալ կառավարման մարմինների կազմակերպման և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ: Ինչպես նաև անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ ստեղծագործական աշխատանքի խթանման, ուսանողների վերլուծական, քննադատական մտածողության, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և կիրառելու ունակությունների զարգացման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ձեռք կբերի.

գիտելիքներ՝

- ✓ Կրթական քաղաքականության ռազմավարության,
- ✓ Ուսումնական հաստատությունների կառավարման օրենսդրության,
- ✓ Ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևերի, դրանց նմանությունների ու տարբերությունների վերաբերյալ,

Կարողություններ՝

- ✓ գործնականում կիրառելու ուսումնական գործընթացի կառավարման արդի սկզբունքները
- ✓ իրացնելու ձեռք բերած գիտելիքները հանրակրթության գործընթացի կարիքները բացահայտելու համար

- ✓ կազմակերպելու ուսումնական հաստատության գործունեության վերահսկողությունը
- ✓ իրականացնելու ուսումնական հաստատության գործունեության գնահատումը,

Հմտություններ

- ✓ Վերհանելու ու վերլուծելու հանրակրթական հաստատությունների կառավարման ժամանակակից մոտեցումները, քննարկելու բացթողումներն ու թերացումները
- ✓ Կիրառելու դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները ուսումնական հաստատության հետագա կառավարման ու ղեկավարման գործընթացում:

Բովանդակություն

Թեմա 1. Ուսումնական հաստատությունների կառավարման իրավունքի աղբյուրները:

Թեմա 2. Հանրակրթության բնագավառում ՀՀ կառավարության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի լիազորությունները:

Թեմա 3. Հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները:

Թեմա 4. Ուսումնական հաստատությունների գործունեության վերահսկողությունը և գնահատումը:

Թեմա 5. Ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևերը:

Թեմա 6. Ուսումնական հաստատության կառավարումը:

Թեմա 7. Պետական ուսումնական հաստատության խորհրդի լիազորությունները և դրանց դադարեցման հիմքերը:

Թեմա 8. Ուսումնական հաստատության տնօրենը և նրա իրավասությունները:

1.3. Տ/մ-1263

Կրթական հաստատությունների կառավարում և շուկայագիտություն (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (26 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական) 1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից կրթական համակարգի կառավարման և շուկայավարման համակարգի բարելավման հիմնական առանձնահատկությունները, նպաստել կրթական հաստատությունների նկատմամբ շուկայական տնտեսության առաջադրած պայմաններին առավել ճկուն և դինամիկ հարմարվելուն, ծանոթացնել այս ոլորտում եվրոպական զարգացած երկրների փորձին:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

Ուսուցողական և վերլուծական գիտելիքներ՝

- ✓ կառավարման, զարգացման, ռազմավարական պլանավորման և ձեռնարկչատիրական գործունեության ծրագրավորման վերաբերյալ
- ✓ կրթական հաստատությունների գործունեության վերաբերյալ զարգացման և բիզնես-պլաններ կազմելու

- ✓ կրթական հաստատությունների կառավարման և շուկայագիտության զարգացման ծրագրերը վերլուծելու, ծրագրի ուժեղ և թույլ կողմերը գնահատելու վերաբերյալ
- ✓ գործառական գիտելիքներ կրթական համակարգի կառավարման և շուկայավարման ոլորտների կառավարման վերաբերյալ,
- ✓ ժամանակակից կրթական ծառայությունների շուկայում վերլուծությունների անկացման, կրթության բնագավառում կառավարման և շուկայավարման մեթոդների կիրառման, ստացված գիտելիքները պրակտիկ կյանքում և հատկապես աշխատանքում ճիշտ օգտագործելու վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բուհական կրթության որակի ապահովման համակարգը, կառավարման գնահատականը, մեխանիզմները և կառավարման մեթոդական հիմքերը

Թեմա 2. Բուհական գործունեության որակի կառավարման գործելաոճերի բովանդակության և ձևափոխությունների զարգացման դինամիկան ՀՀ-ում

Թեմա 3. Բուհական գործունեության որակի կառավարման մոդելները և նրանց հարմարեցումը ՀՀ բարձրագույն կրթական համակարգի առանձնահատկություններին

Թեմա 4. Բարձրագույն կրթության որակի ապահովման և գնահատման արտասահմանյան փորձը և դրա համեմատական վերլուծությունը ՀՀ բարձրագույն կրթական համակարգի հետ

Թեմա 5. Որակյալ կրթությունը որպես պետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական գործոն: Բուհի գրավչության և շուկայում մրցունակության սոցիալ-տնտեսական գնահատման հիմքերը

Թեմա 6. ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի իրավիճակի վերլուծությունը, գործընթացի պետական վերահսկողությունը և և գնահատման մեխանիզմները

Թեմա 7. Բուհական գործունեության որակի արտաքին և ներքին գնահատման մեխանիզմները, համակարգի վերակառուցման մոդելները և ինքնագնահատման միջոցառումները:

Թեմա 8. Կրթական հաստատությունների մարքեթինգային ռազմավարության ժամանակակից հայեցակարգերը:

Թեմա 9. Կրթական հաստատությունների մարքեթինգային կառավարման արտաքին (միկրոմիջավայր, մակրոմիջավայր) և ներքին միջավայրերը

Թեմա 10. Մարքեթինգային հետազոտությունները եւ տեղեկատվական բազաները կրթական համակարգում

Թեմա 11. Կրթական ծառայությունների շուկայի էությունը, դասակարգումը եւ մասնակիցները:

Թեմա 12. Կրթական ծառայությունների շուկայի հատվածավորումը, նպատակային շուկայի ընտրությունը և դիրքորոշումը:

Թեմա 13. Կրթական ծառայությունների ներկայացման դերը իրացման խթանման միջոցառումները մարքեթինգի համակարգում:

1.4. Օլ/մ-0148

Օտար լեզուն մասնագիտական հաղորդակցության ոլորտում (լրացական դասընթաց)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական), 1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Դասընթացի նպատակն է՝ հարստացնել ուսանողների գիտելիքները, կատարելագործել նրանց հմտությունները, ընդլայնել այն թեմաների շրջանակը, որտեղ նրանք կարող են արդյունավետ օգտագործել անգլերեն լեզուն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ կկարողանա զարգացնել անգլերեն լեզվի հաղորդակցական կոմպետենցիաները,
- ✓ կստանա մասնագիտական գրականությունը թարգմանելու, գիտական հոդվածներ կարդալու և հասկանալու ունակություններ,
- ✓ կյուրացնի գրական լեզվի օրինաչափությունները :

Բովանդակությունը

Թեմա 1. Text: John Reed's Biography.

Notes on Style. Active words and Word Combinations. Vocabulary Exercises.

Գրամար: Participle I Perfect.

Revision: Participle I (Simple), Participle II. Exercises.

Թեմա 2. Text: Mistaken Identity.

Active words and Word Combinations. Speech Exercises. Vocabulary Exercises (Stage I).

Գրամար: Continuous Tense-forms, Passive Voice.

Revision: Indefinite and Perfect Tense-forms, Passive Voice. Գրամար Exercises.

Թեմա 3. Dialogues: In Front of a Hotel. In the Hall. Active Words and Word Combinations.

Speech Exercises.

Vocabulary Revision. Test.

Թեմա 4. Text: The Creative Impulse. Notes on Style. Active Vocabulary

Exercises (Stage I, II).

Գրամար Revision: Articles.

Գրամար and Speech Exercises.

Discussion on the Text.

Թեմա 5. Text: The Creative Impulse (Continued).

Active Words and Word Combinations. Vocabulary Exercises (Stage I).

Գրամար: Perfect Continuous Tense-forms.

Oral and Written Exercises.

Թեմա 6. Dialogue: Impressions of a Film.

Notes on the Style. Role-playing.

Գրամար and Vocabulary Revision. Make up dialogues Using the Active Vocabulary.

Test.

Թեմա 7. Text: He Overdid It.

Active Words and Word Combinations. Notes. Proper Names. Vocabulary Exercises. (Stage I).

Adjectives that Behave like Nouns.

“Used to and Would”.

Revision: Forms of the Active and Passive Voices.

Թեմա 8. Lesson 8

Text: A Future Businessman.

Active Vocabulary. Exercises (Stage I).

1.5. Հլ/մ-0054.

Մասնագիտության արդի հիմնախնդիրները (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական), 1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Տվյալ առարկայի դասավանդումը մաթիստրատորայում նպատակ ունի ապահովել համակարգի փոփոխման և խորը մաթիստիկական արդի հիմնախնդիրների վերաբերյալ համակողմանի և խորը մաթիստիկական գիտելիքներով, դրանք սեփական հետազոտություններում քննադատաբար կիրառելու հրատարակելու:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

- ✓ քանասիրության արդի հիմնախնդիրների հիմնավոր և խորը իմացություն,
- ✓ քանասիրության արդի հիմնախնդիրների վերաբերյալ տեսական գիտելիքները գործնականում քննադատաբար վերլուծելու և կիրառելու հմտություններ:
- ✓ ունակություններ՝ քանասիրության արդի հիմնախնդիրներին վերաբերող ժամանակակից հարուստ, հաճախ հակասական տեղեկատվության մեջ ճիշտ կողմնորոշվելու և այն տեղին և նպատակային կիրառելու ունակություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայկական այբուբենի ծագման նոր մեկնաբանություններ : Դանիելյան նշանագրեր:

Թեմա 2 . Արևելահայերենի ազգային կորպուս:

Թեմա 3. Հայերենի անվանական և բառային բառափոխություններ. ա) հոլովի կարգի ներկայացում բ) թվի կարգի ներկայացում գ) հայերենի բայական ձևակազմություն:

Թեմա 4. Դերանվան ըմբռնումը հայ քերականագիտության մեջ:

Թեմա 5. Գրական արևմտահայերենի ժամանակակից հիմնախնդիրները: ***Կու*** մասնիկի ծագումը հայերենում:

Թեմա 6. Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ:

Թեմա 7. Նախադասությունների կապակցման ոչ ճիշտ դրսևորումներ արդի մամուլում:

Թեմա 8. Լեզվական փաստերին արդի մոտեցում :

Թեմա 9. Հայերենագիտության արդի խնդիրները ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրություններում:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱՄԱՍ

2.1. Հլ/մ-0042

Ընդհանուր լեզվաբանություն (5 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (36 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական) 4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ներկայացնել ընդհանուր լեզվաբանության առանցքային հայեցակարգերը՝ լեզվաբանության պատմության շրջափուլերի կազմավորման վրա էական ազդեցություն թողած լեզվաբանների ուսմունքների մեկնությամբ, համապատասխան նյութերը մատուցելիս ուսանողի ուշադրությունը հրավիրել այդ խնդրում հայ լեզվաբանների ունեցած դերի վրա: Կարևոր է գիտակցել տալ լեզվաբանության պարբերացման տարբեր փուլերի ներքին տրամաբանությունն ու փոխկապակցվածությունը, գիտությունների զարգացման գործընթացները և դրանց

աղերսները: Այս ամենի նպատակն է լինելու է ուսանողին պրպտումների մղելը՝ ընդհուպ մինչև նրա մեջ լեզվաբանությունը կյանքի հետ կապելու հմտության ձևավորումը: Սա էլ կօգնի ուսանողին՝ ինչ-որ առումով լեզվաբանական հոտառության ձեռքբերմանը, նույնիսկ այս գիտության մեջ հեռանկարային կանխատեսումների հասնելուն:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

✓ կստանա հիմնարար գիտելիքներ լեզվաբանության պատմության տարբեր փուլերից և ժամանակակից լեզվաբանությունից,

✓ կկարողանա կիրառել դրանք, ընկալել և իմաստավորել համընդհանուր լեզվաբանական կաղապարները, տիրապետել լեզվաբանական մեթոդաբանությանը, վերլուծել, էթե դրանք չեն դիտարկվել ուսումնառության ընթացքում, ունակ կլինի հասկանալու և գնահատելու լեզվաբանական հիմնախնդիրները, կկարողանա գիտելիքները գործնականում կիրառել, առաջ քաշել խնդիրներ և դրանք լուծել,

✓ իրագեկ լինելով ընդհանուր լեզվաբանության ընդհանրական կաղապարներին՝ հմտություն կցուցաբերի դրանք տարածելու և իրացնելու մասնավոր լեզվաբանական կաղապարների վրա:

Ուսանողի կարողությունների և հմտությունների հանգակետում կձևավորվեն ունակություններ, որոնք չափելի կլինեն նշվածերի ներանցվածությամբ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն:

Թեմա 2. Լեզվաբանության պատմության պարբերացումը:

Թեմա 3. Ֆ.դը Սոսյուրի համակարգային–վերլուծական լեզվաբանության շրջանը (երկչափ սկզբունք):

Թեմա 4. Վիլիելմ ֆոն Հումբոլդտի տրամախոսական միաչափությունը և լեզվաբանության կազմավորման համադրական շրջանը:

Թեմա 5. Լեզվաբանության պատմության նորագույն փուլը. բազմաչափ սկզբունք (Է. Աթայանի գերհամարադրական լեզվաբանությունը և նրա հեռանկարները):

Թեմա 6. Լեզվի գոյամակարդակների ըմբռնումը. լեզվի տրամաբանական, հոգեբանական և նյութական շերտերի հարաբերակցությունը:

Թեմա 7. Լեզվի գոյամակարդակների և ստորակարգային մակարդակների հարաբերակցությունը:

Թեմա 8. Լեզվի ստորակարգային մակարդակների վերանայման անհրաժեշտությունը՝ նորագույն լեզվաբանության լույսի ներքո:

Թեմա 9. Հիմնային, շարային և վերասացական մակարդակների և մակարդակային հասկացությունների, պատկերացումների ու միավորների հարաբերակցության խնդիրը:

Թեմա 10. Լեզվաբանական նորագույն ներգիտակարգերը և միջգիտակարգերը:

Թեմա 11. Լեզվիմաստասիրության և լեզվանշանագիտության փոխհարաբերությունը:

Թեմա 12. Լեզվաբանական մեթոդաբանություն: Մեթոդների տիպաբանությունը:

Թեմա 13. Լեզվաբանության հեռանկարները:

2.2. Հ/մ-0043

Միջին հայերեն (4 կրեդիտ)

Շաբաթական 3,8 ժամ (8 ժամ դասախոսություն, 52 ժամ գործնական), 2- րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Միջին հայերեն դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել միջին հայերենի՝ որպես հայոց լեզվի տեսության կարևորագույն գիտակարգերից մեկի կառուցվածքային բնութագրի, ինչպես նաև նրա տիպաբանական նկարագրի մասին մասնավոր գիտելիքներ:

Դասընթացն ընդգրկում է հարցեր միջին հայերենի տարբեր համակարգերի և ենթահամակարգերի օրինաչափությունների վերաբերյալ, տալիս է լեզվի պատմական զարգացման ընդհանուր նկարագրի մեջ միջինհայերենյան շերտի դերի արժևորումը, շեշտում է նրա առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը.

✓ կստանա հիմնավոր գիտելիքներ՝ միջին հայերենի կառուցվածքային առանձնահատկությունների և օրինաչափությունների վերաբերյալ,

✓ կկարողանա գործնականում կիրառել ստացած տեսական գիտելիքները,

✓ ձեռք կբերի բանասիրական տեքստերի վրա աշխատելու հմտություններ՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով սեփական, ինքնուրույն մոտեցում միջինհայերենյան լեզվական փաստերին,

✓ ունակ կլինի կատարելու հայոց լեզվի զարգացման պատմության պարբերացում, այդ մասին եղած կարծիքների քննադատական վերլուծության, ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակություն

Թեմա 1. Միջին հայերենի անվանական հոլովման համակարգը: Հոլովի քերականական կարգը:

Թեմա 2. Ուղղական հոլով: Հայցական հոլով:

Թեմա 3. Սեռական – տրական հոլովաձև:

Թեմա 4. Բացառական հոլով: Գործիական հոլով: Ներգոյական հոլով:

Թեմա 5. Առկայացման քերականական կարգը միջին հայերենում:

Թեմա 6. Միջին հայերենի հոլովման համակարգի պատմական զարգացումը:

Թեմա 7. Միջին հայերենի դերանվանական հոլովման համակարգը:

Թեմա 8. Միջին հայերենի բայը և խոնարհման համակարգը:

Թեմա 9. Անդեմ բայերի համակարգը:

Թեմա 10. Դիմավոր բայեր կամ խոնարհման համակարգ

Թեմա 11. Վերլուծական և կրկնաբաղադրյալ ժամանակաձևերը: Անկանոն և պակասավոր բայեր:

2.3. Հլ/մ-0044

Հայոց լեզվի տեսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական), 1- ին կիսամյակ, քննություն

Նպատակը

Մագիստրատուրայում լեզվի տեսության դասընթացի նպատակն է համակարգել բակալավրիատի նախորդ կուրսերում ձեռք բերած գիտելիքները և այդ ամենը ներկայացնել լեզվաբանական գիտության լույսի տակ՝ հաշվի առնելով ինչպես այդ բնագավառի նախորդ շրջանի նվաճումները, հեղինակային տեսությունները, այնպես էլ նորագույն ձեռքբերումները: Այս դասընթացի շրջանակներում անդրադարձ

կլինի նախորդ տարիներին չուսաբանված հարցերին, կբացահայտվեն և կմեկնաբանվեն վիճելի հարցեր և դրույթներ, հայերենի կառուցվածքային համակարգի պատմական զարգացմամբ պայմանավորված լեզվական երևույթներ:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

✓ կստանա գիտելիքներ՝ «Հայոց լեզվի տեսություն» առարկայի գիտակարգային սահմանների ժամանակակից ընկալումների իմացություն, հայոց լեզվի տեսության հիմնախնդիրների, լեզվի տեսության տարբեր բաժինների հիմնադրույթների և դրանց ներքին կապերի իմացություն,

✓ ձեռք կբերի քննադատական վերլուծության և համադրության, «Հայոց լեզվի տեսություն» դասընթացի բուհական ուսուցման կազմակերպման ժամանակակից մեթոդների և առանձնահատկությունների, տեսական հիմնարար դրույթների իմացություն և դրանց կիրառման կարողություն, լեզվական փաստերին ինքնուրույն մոտեցում ցուցաբերելով՝ բանասիրական տեքստերի վրա աշխատելու, խոսքային կառույցի լեզվական կաղապարները (եթե դրանք չեն դիտարկվել բակավրական ուսումնառության ընթացքում) ընկալելու և վերլուծելու հմտություններ,

✓ ձեռք կբերի ունակություններ՝ ժամանակակից հայերենի կանոնիկ և անկանոն ձևերի գնահատման հարցում կողմնորոշվելու:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայոց լեզվի տեսության համառոտ պատմական ակնարկ: Հայերենի հնչյունական համակարգի՝ նախորդ դասընթացներում չդիտարկված առանձնահատկությունների վերլուծություն:

Թեմա 2. Բառագիտություն: Հայերենի բառակազմության օրինաչափությունները նկարագրական . պատմական բառագիտության համեմատական քննության լույսի տակ:

Թեմա 3. Բառիմաստ և բառի ձև. ձևի և իմաստի փոխհարաբերության հարցերը լեզվում: Բառը որպես նշանային միավոր: Ձևույթի ընկալման տարաբնույթ դիտարկումները հայ և ընդհանուր լեզվաբանության մեջ: Աճական, ձայնդարձ, ներույթ, սին տարր:

Թեմա 4. Ձևաբանություն. խոսքի մասի ըմբռնումը հայ քերականագիտության մեջ: Խոսքիմասային երկիմաստության խնդիրը և խոսքիմասային փոխանցումներ:

Թեմա 5. Անվանական քերականական կարգեր: Դերանվանական քերականական կարգեր:

Թեմա 6. Հատկանշային իմաստ արտահայտող խոսքի մասեր:

Թեմա 7. Մակրոշարահյուսություն և միկրոշարահյուսություն. շարահյուսական մակարդակի միավորներ և նախադասության անդամներ: Ստորոգական քերականական կարգը:

Թեմա 8. Բարդ նախադասության կառուցվածքը և տիպերը:

2.4. Հլ/մ-0045

Արդի ոճագիտության հիմնահարցեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

3 կիսամյակ, քննություն

Լպատակը.

Ուսանողներին ծանոթացնել արդի ոճագիտության հիմնահարցերին և այդ բնագավառի վերջին տարիների ձեռքբերումներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կստանա.

✓ գիտելիքներ ոճաբանության հիմնական հասկացությունների, ոճի տեսակների, հնչունային ոճական հնարների, բառային, ձևաբանական, շարահյուսական ոճաբանությունների ոլորտներում,

✓ հմտություններ և կարողություններ բանադարձումների, դարձույթների, բառապաշարի ոճական շերտերի, տեքստի ոճաբանության հիմնահարցերի մեջ խորանալու, որոնց յուրացումը կօգնի ուսանողներին սեմինարների, գործնական և ինքնուրույն աշխատանքների ժամանակ հանձնարարվող աշխատանքների լիարժեք կատարմանը:

✓ ունենալով համապատասխան գիտելիքներ, կարողություններ և հմտություններ՝ ուսանողները կկարողանան ոճագիտության սահմանները տարածել ոչ միայն լեզվի որևէ մի կառուցվածքային մակարդկում, այլ նաև մարդկային լեզվի բոլոր շերտերում և մակարդակներում:

Դասընթացի բովանդակությունը.

Թեմա 1. Ոճաբանության հիմնական հասկացությունները:

Թեմա 2. Գաղափար ոճի մասին: Ոճի տեսակները:

Թեմա 3. Հնչունային ոճական հնարներ: Բառային ոճաբանություն:

Թեմա 4. Ձևաբանական ոճաբանություն:

Թեմա 5. Շարահյուսական ոճաբանություն:

Թեմա 6. Շարահյուսական փոխաբերություններ:

Թեմա 7. Վերաիմաստավորում:

Թեմա 8. Շարահյուսական բանադարձումներ:

Թեմա 9. Մասնատված նախադասություններ:

Թեմա 10. Տեքստի ոճաբանություն:

Թեմա 11. Տեքստային ոճական հնարներ:

2.5. Հլ/մ-0046

Ժամանակակից հայերենի բառագիտության և քերականության հարցեր (5 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (36 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական), 3 կիսամյակ, քննություն

Նպատակը

Ժամանակակից հայոց լեզվի տարբեր բաժինները ուսուցանվում են համապատասխան կուրսերում բակալավրի կրթական ծրագրով նախատեսված ժամաքանակով և բովանդակությամբ: Մագիստրատուրայում այս դասընթացի նպատակն է համակարգել նախորդ կուրսերում ձեռք բերած գիտելիքները՝ հաշվի առնելով ինչպես այդ բնագավառի նախորդ շրջանի նվաճումները, այնպես էլ նորագույն տեսակները, ձեռքբերումները: Այս դասընթացի շրջանակներում անդրադարձ կլինի նախորդ տարիներին չլուսաբանված հարցերին, կբացահայտվեն և կմեկնաբանվեն վիճելի հարցեր ու տեսակետներ, հակասական դրույթներ և տեսություններ, հայերենի կառուցվածքային համակարգի պատմական զարգացմամբ պայմանավորված լեզվական նորագույն երևույթներ:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

✓ գիտելիքներ՝ լեզվաբանության տարբեր բաժինների նորագույն ձեռքբերումների մասին, որոնք արժարժված են հայ և ռուս լեզվաբանների աշխատություններում, կարողություններ՝ տեսական դրույթները քննադատելու,

համադրելու, վերլուծելու, ինքնուրույն եզրակացություններ անելու և տարաբնույթ տեսակետներից ճիշտը, արդիականը ընտրելու,

✓ հմտություններ՝ լեզվական փաստերին ինքնուրույն մոտեցում ցուցաբերելով՝ բանասիրական տեքստերի վրա աշխատելու, խոսքային կառույցի լեզվական կաղապարները (եթե դրանք չեն դիտարկվել բակավրական ուսումնառության ընթացքում) ընկալելու և վերլուծելու, առաջադրված թեմային առնչվող աղբյուրները գտնելու,

✓ ունակություններ՝ ժամանակակից հայերենի կանոնիկ և անկանոն ձևերի գնահատման հարցում կողմնորոշվելու, համակարգի (հակահամակարգի) և նորմի տարբերությունները հասկանալու, դրանց ընձեռած հնարավորություններից օգտվելու:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ձևային վերլուծության հարցեր. ձևայինների պարզեցում:

Թեմա 2. Հոդակապի հարցը հայերենում (ա և ե):

Թեմա 3. Միջածանցներ և միջածանցում:

Թեմա 4. Հապավումներ և անհոդակապ բարդություններ. (տարբերակման հիմունքներ):

Թեմա 5. Հոլովների հարցը հայերենում:

Թեմա 6. Հոլովման տիպերը:

Թեմա 7. Իմաստային և ձևային հոլովումների հարցը:

Թեմա 8. Շնչավոր և անշունչ գոյականների քերականական տարբերակման հիմունքներ:

Թեմա 9. Թվի քերականական կարգը. անեզական անհոգնական գոյականներ:

Թեմա 10. Որակական և հարաբերական ածականների տարբերակման հիմունքները:

Թեմա 11. Թվականների տեսակների հարցը լեզվաբանության մեջ:

Թեմա 12. Դերանուններ. հարցական և հարաբերական, որոշյալ և ժխտական:

Թեմա 13. Բայի սեռի քերականական կարգը (3, 4 թե՛ 6 սեռ):

Թեմա 14. Կերպի քերականական կարգը հայերենում. վիճելի հարցեր:

Թեմա 15. Անորոշ դերբայը և նրա շարահյուսական գործառույթների խնդիրը:

Թեմա 16. Եղանակի քերականական կարգը. հարկադրական եղանակի ճանաչման և ենթադրական եղանակի գնահատման հարցը:

Թեմա 17. Անկանոն և պակասավոր բայերի գնահատման հարցը:

Թեմա 18. Ժխտական խոնրիումը ժամանակակից հայերենում:

Թեմա 19. Նկարագրական մակբայներ և շարահյուսական կապակցություն:

Թեմա 20. Անիսկական կապեր և կապական բառեր:

Թեմա 21. Մի շարք շաղկապների իմաստային դասակարգման հարցեր:

Թեմա 22. Բառակապակցության ճանաչման հարցը լեզվաբանության մեջ:

Թեմա 23. Բաղադրյալ ստորոգյալ:

Թեմա 24. Գոյականական անդամի լրացումներ:

Թեմա 25. Բայական անդամի լրացումներ:

Թեմա 26. Բարդ նախադասություն:

2.6. Հլ/մ-0047

Տիպաբանություն. Ժամանակակից հայերենի տիպաբանության հարցեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար), 3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր և ժամանակակից հայերենի տիպաբանությանը վերաբերող գիտելիքներ, տիպաբանական հետազոտություններ կատարելու հմտություններ, ընդհանուր տիպաբանության հարցադրումների համատեքստում և դրանց օգնությամբ ուսանողը ճանաչի ժամանակակից հայերենի տիպաբանական նկարագիրը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

✓ գիտելիքներ տիպաբանություն գիտակարգի ուսումնասիրության առարկայի, խնդիրների, մեթոդների, միջգիտակարգային առնչությունների վերաբերյալ,

✓ տեղեկություններ տիպաբանության պատմության, հիմնական տիպաբանական դասակարգումների, լեզվական մակարդակներից յուրաքանչյուրում առկա տիպաբանական հարցադրումների մասին,

✓ կարողություններ՝ ճիշտ բնութագրելու հիմնական հասկացությունները և տեսությունները,

✓ հմտություններ՝ կատարելու տիպաբանական հետազոտություններ տարբեր ոճերի տեքստերի վրա,

✓ ունակություններ՝ «հանգուցային բառեր» մեթոդով աշխատելու:

Բովանդակությունը

Թեմա 1. Տիպաբանությունը որպես լեզվաբանական գիտակարգ:

Թեմա 2. Տիպաբանության հիմնական հասկացությունները:

Թեմա 3. Լեզուների տիպաբանական դասակարգումները:

Թեմա 4. Տիպաբանությունը որպես լեզվաբանական գիտակարգ և լեզուների տիպաբանական դասակարգումը:

Թեմա 5. Ընդհանրություններ և ՈւԼԿ: Մետալեզու: Էտալոն լեզու:

Թեմա 6. Հնչյունաբանական տիպաբանությունը և ժամանակակից հայերենը:

Թեմա 7. Բառագիտական տիպաբանությունը և ժամանակակից հայերենը:

Թեմա 8. Ձևաբանական տիպաբանությունը և ժամանակակից հայերենը:

Թեմա 9. Շարահյուսական տիպաբանությունը և ժամանակակից հայերենը:

Թեմա 10. Գրական հայերենի տիպաբանական նկարագիրը:

2.7. Գ/մ-0230

Արդի հայ գրականության զարգացման առանձնահատկությունները (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (16 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար), 3-րդ կիսամյակ, ստուգարք:

Նպատակը

Դասընթացի նպատակը արդի հայ պոեզիայի զարգացման առանձնահատկությունների և միտումների, գլխավոր գործող անձանց ստեղծագործությունների ներկայացումն է, ինչպես նաև արդի պոեզիայի ժառանգորդության, հայ և համաշխարհային պոեզիաների հետ փոխառնչությունների պարզաբանումը, ծանոթացումը արդի հայ պոեզիայի նմուշներին:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պետք է կարողանա հստակ ու ամբողջական պատկերացում կազմել արդի պոեզիայի զարգացման միտումների և առանձնահատկությունների վերաբերյալ,

վերլուծել բնագիրը և ճշտել այս կամ այն հեղինակի տեղն ու դերը գրական համապատկերում և արդի գրական պրոցեսում:

Բովանդակությունը

Թեմա 1. Արդի հայ գրականություն՝ եզրույթը, դրսևորման ժամանակը, զարգացման հիմնական առանձնահատկությունները, գործող ուժերը:

Թեմա 2. Մերօրյա հայ քնարերգության գործող ավագ սերունդը. Արևշատ Ավագյան, Լյուդվիգ Դուրյան, Ռ. Դավոյան և այլն:

Թեմա 3. Պոեզիան և արվեստի փիլիսոփայությունը: Միֆի գործառույթը արդի հայ պոեզիայում: Մշակույթների սինթեզը հայ պոեզիայում:

Թեմա 4. Ավանդույթ և նորարարություն:

Թեմա 5. Բանաստեղծության ազատականացումը:

2.8. Գ/մ-0223

Հայ հին և միջնադարյան գրականության տեսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (16 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական), 1-ին կիսամյակ, ստուգարք:

Նպատակը

1. Ուսանողներին զինել հայ գրականության մասին գիտելիքներով:
2. Խորացնել և ընդլայնել ուսանողների հին և միջնադարյան հայ գրականությանը վերաբերող ընդհանուր գիտելիքները:
3. պարզաբանել գրական երկի վերլուծության և արժևորման նոր ելակետերի առաջադրման հարցերը, տեսական հարցադրումները, պոետիկայի խնդիրները:
4. Նախապատրաստել բանասիրական ցիկլի առարկաների հետագա ուսումնասիրությանը:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ կատանա գիտելիքներ՝ հայ հին և միջնադարյան գրականության տեսական հիմնահարցերի մասին,
- ✓ կկարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում,
- ✓ կտիրապետի գրականության ուսումնասիրման մեթոդներին,
- ✓ ձեռք կբերի որոշ գիտական հարցերի շուրջ ինքնուրույն եզրահանգումներ կատարելու ունակություններ:

Բովանդակությունը

Թեմա 1. Նախամաշտոցյան շրջանի գրի և գրականության հարցի շուրջ:

Թեմա 2. Հայ գրականությունը 5-րդ դարում:

Թեմա 3. Հայ գրականությունը 6-9 դարերում:

Թեմա 4. Հայ գրականությունը 10 -12 դարերում:

Թեմա 5. Հայ գրականությունը 13 – 16 դարերում:

Թեմա 6. Հայ գրականությունը 17 – 18 դարերում:

3. ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱՄԱՍ

3.1. Հլ/մ-0056

Լեզվանշանագիտություն և լեզվիմաստասիրություն (3 կրեդիտ)

Շաբաթական 1.8 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար), 1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը

Գիտակարգի նպատակը լեզվական նշանների և լեզվի՝ որպես գերնշանի « դերի խորքային ընկալումն է՝ կացութենական, գորութենական, գործութենական շերտերի և դրանց տարոլորտ հարաբերակիցների՝ նշանային գոյակերպերի ու լեզվական գոյամակարդակների, նույնականության, միասնականության ու հակադրականության, այլև լեզվին ու լեզվական իրակություններին բնուստ հատուկ ներհակությունների իմաստասիրական կերպընկալման ապահովումը և դրանց աղերսումը կյանքին, այս ամենով՝ կենսական տարբեր գոյածների խոհական գնահատումը:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կունենա հիմնարար գիտելիքներ լեզվի նշանային բնույթից և լեզվական ու լեզվանշանային իրակությունների իմաստասիրական հարաչափերից, կկարողանա կիրառել գիտելիքները, ընկալել և իմաստավորել լեզվական նշանները, տիրապետել նշանների գնահատման տրամախոսական մեթոդաբանությանը» կկարողանա գիտելիքները գործնականում կիրառել, առաջ քաշել խնդիրներ և դրանք լուծել,
- իրագեկ լինելով լեզվի և լեզվական նշանների իմաստասիրական նրբություններին՝ ուսանողը հմտություն կցուցաբերի դրանք տարածելու այլ գիտակարգերի վրա և իրացնելու մինչև իսկ կենսական տարբեր որլորտներում:
- ունակ կլինի հասկանալու և գնահատելու լեզվական նշանների ներհակությունները. ունակությունները ուսանողի կարողությունների և հմատությունների հանգակետում խաչաձևված կայական հնարավորությունն են, ուստի դրանք չափելի են նշվածերի ներանցվածությամբ:

Բովանդակությունը

Թեմա 1. Գիտակարգի առարկան, խնդիրը, նպատակը: Միջգիտակարգային աղերսները: Գիտակարգում կիրառվող մեթոդները (ընդհանուր բնութագիր):

Թեմա 2. Համեմատության եզրերը՝ որպես նշանային բևեռներ՝ Վերլուծություն և համադրություն» արտածություն և մակածություն բևեռների նշանային բնութագիրը՝ Նկարագրության եղանակի նշանային բնույթը՝ Բաշխումային հարաբերությունները՝ նշանագիտական տեսանկյունից:

Թեմա 3. Միջուկն ու փոխակերպը՝ որպես միևնույն նշանի գործուն և ոչ գործուն» աննշույթ և նշութակիր բևեռներ: Կադապարը՝ որպես նշանի ընդօրինակ նշան: Փոխկադապարումը՝ որպես համասեռ և տարասեռ նշանների հատում ու միավորում: Հակասող ենթադրությունը՝ որպես նախորդ ենթադրության բացասման նշանային բևեռ: Տրամախոսության նշանային էությունը:

Թեմա 4. Հեգելի նշանագիտական գեղագիտությունը: Հնչյունը՝ որպես ներքին հայեցողությունների և պատկերացումների պարզ նշան ու նշանակում: Հնչյունի նշանային արժեքը երաժշտության և բանաստեղծության մեջ: Հնչյունը՝ որպես երաժշտության բովանդակային բաղադրիչ և բանաստեղծության արտահայտության տարր՝ բանաստեղծության մեջ որպես ոգու նկատմամբ հարաբերական համարժեքություն պահպանող զգայական նյութ: Բանաստեղծական արտահայտություն և բովանդակություն:

Թեմա 5. Նկարչություն, երաժշտություն և խոսքարվեստ. ընդհանրությունն ու տարբերությունը նշանագիտական և իմաստասիրական հայեցակետերով:

Լեզվական նշան. Հասկացություն, պատկերացում, բառ: Բառային նշանի կամայականության հեզելյան և սույուրյան ըմբռնումների հարազատությունը և դրանց քննադատությունը:

Ձեմա 6. Նշան, նշանակություն և արտահայտություն: Խորհրդանշանի բնույթը՝ գեղագիտական, լեզվաբանական, իմաստասիրական հայեցակետերով: Խորհրդանշանի տարբերությունը մյուս (գուտ արտաքին և ձևական) նշաններից: Փոխաբերություն և համեմատություն:

Ձեմա 7. Հումբուրդտի լեզվիմաստասիրությունը՝ նշանագիտական հայեցակետով: Լեզվական նշանների ներհակության տրամախոսական մեկնությունը: Բառի կայունության և փոփոխականության նշանային ներհակությունը: Լեզվի՝ որպես գործի (երգոն) և գործունեության (էներգեյա) ներհակությունը:

Ձեմա 8. Հաղորդողի և ընդունողի, փոխադարձ ըմբռնման և անըմբռնողության ներհակության նշանային արժեքը: Խոսելու և հասկանալու հոգեկան պայմանավորվածության նշանային բնույթը: Լեզվի զարգացման պայմանավորվածությունը կայունության և փոփոխականության նշանային բևեռների ներդաշնակությամբ:

Ձեմա 9. Անհատական, ազգային և համամարդկային լեզուների՝ որպես նշանային շերտերի ընդհանրությունն ու տարբերությունը: Լեզվի հաղորդակցական ինքնարտահայտման և այլարտահայտման նշանային շերտերը: Լեզուն և մտածողությունը՝ նշանային մեկնակետով: Լեզուն՝ որպես մտքի մարմին և ներքին ձև: Լեզվի գեղագիտական կողմը (Լեզուն աշխարհի լուսանկարը չէ, այլ գեղարվեստական պատկերն է):

Ձեմա 10. Լեզվական ձևի ներհակության նշանային բնութագիրը. բովանդակության և (արտաքին) ձևի, նյութի և (ներքին) ձևի տրամախոսական հարաբերակցությունը: Հնչյունական կառուցվածքով պայմանավորված արտաքին ձևը՝ որպես լեզուների տարբերության սկիզբ: Ներքին ձևը՝ որպես բովանդակությունն արտաքին ձևին շաղկապող իմաստային կառուցվածք: Լեզուների անհատական ձևը՝ որպես ներքին և արտաքին ձևերի համադրություն:

Ձեմա 11. Լեզուների համընդհանուր ձևը՝ որպես բոլոր լեզուներին հատուկ ձև: Լեզվի կատարյալ ձևը՝ որպես լեզվի և մտքի լիակատար համապատասխանություն. դրա անհնարինությունը: Ձևավորված լեզվի գործածությունը՝ որպես լեզվի փոփոխություն և լեզվի անընդմեջ ծագում: Լեզվի կայական ձևը՝ որպես նրա քարացած վերարտադրում մեր գիտակցության մեջ: Լեզվի գորութենական ձևը՝ որպես լեզվի զարգացման օրենք:

Ձեմա 12. Լեզվական նշանի միակողմ, երկկողմ, եռակողմ և քառակողմ (լիակատար) կադապարները: Նշանային շղթայի անվերջությունը:

Ձեմա 13. Գոյավիճակային ոլորտների, լեզվական գոյամակարդակների և նշանային գոյակերպերի (չափումների) հարաբերակցությունը. վերջին երկուսը՝ որպես առաջինի լեզվական ու նշանային բեկումներ: Շարակցայնությունը՝ որպես իմաստայնության ներկայացում գործայնության մեջ. իմաստայնությունը՝ որպես գործայնության ներունակություն. գործայնությունը՝ որպես իմաստայնության իրացում:

Ձեմա 14. Լեզվական և արտալեզվական նշանների հարաբերակցությունը. լեզվական նշանի բնականության և պայմանականության հանգույցը. բնական նշանի պայմանականությունը և պայմանականի բնականությունը: Իմաստ և նշանակություն:

Թեմա 15. Հնչույթը՝ որպես միակողմ (նշանակակիր-իմաստագուրկ) միավոր՝ բնական նշան, իմաստագատիչ հակադրությունների համակարգում: Ձևույթի, շարույթի, ասույթի և վերասույթի՝ իմաստով պայմանավորված նշանային բևեռայնությունը:

Թեմա 16. Ձևույթի և շարույթի գործառման նշանային համասեռությունը. մենանդամ շարույթը (ընդհանուր անդամը)՝ որպես բառահարաբերական ձևույթի ծավալված համարժեք. բառահարաբերական ձևույթը՝ որպես մենանդամ իմաստաշարույթ: Լեզվական հիմքի նշանային բնույթը:

Թեմա 17. Շարահյուսական հարաբերությունները՝ ըստ նշանային տիպերի և արտալեզվական չափումների. հարաբերությունների բնականությունը. դրանց տրամախոսական շերտավորվածությունն ըստ գոյավիճակային ոլորտների և լեզվանշանային գոյամակարդակների:

Թեմա 18. Լեզվական միավորի նշանային կազմավորումը. Նշանակում, նշանակցում, նշարկում: Նշանակիչ և նշանակյալ բևեռների հարաբերական հակադրայնությունը:

Թեմա 19. Ստորոգման նշանային բնույթը և էությունը: Ստորոգման իմաստասիրական« տրամաբանական» հոգեբանական և շարահյուսական հարաչափերը. դրանց տրամախոսական հակադրամիասնությունը: Ենթահիմք և մակաբերյալ: Ստորոգման մակարդակաբանությունը. ստորոգական վերնոլորտ« ներքնոլորտ և միջնոլորտ: Խորքային և մակերեսային ստորոգումների իմաստասիրական-նշանագիտական գնահատումը:

Թեմա 20. Հաղորդակցման նշանային սկզբունքը. լեզվական նշանը սուբյեկտ-օբյեկտային հարաբերություններում:

Տիեզերական գերաշխարհ (գերնշան): Լեզվական և արտալեզվական աշխարհները՝ որպես գերաշխարհի նշանային բեկումներ« դրանց տրամախոսական միասնությունն ու տարրոշվածությունը:

3.2. Հլ/մ-0050

Նորաբանությունները հայերենում (3 կրեդիտ)

Շաբաթական 1.8 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար), 1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողների բառապաշարի զարգացումը և հարստացումը: Ուսանողների բառապաշարին ավելի հարուստ, գրագետ և գեղեցիկ դարձնել, բառապաշարի հարստացմանը գիտական մոտեցում ցուցաբերել հատկապես լեզու-գրականություն միջգիտական կապով:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

- գիտելիքներ՝ բառապաշարի շերտերի՝ մասնավորապես, նորաբանությունների ուսումնասիրությունների մասին,
- կարողություններ՝ տարբերակելու նորաբանությունները և դրանց արտահայտությունները, կիրառությունները ներկայացնել տարբեր մեթոդական հնարներով,
- հմտություններ՝ լեզվի տարբեր շրջաններին հատուկ նորաբանությունների կիրառություն,
- ունակություններ՝ բացահայտելու բառապաշարի փոփոխությունները՝ ըստ իմաստավորության հիմունքների:

Բովանդակությունը.

Թեմա 1. Նորաբանություններն իբրև բառագիտության ուսումնասիրման առարկա

Թեմա 2. Նորակազմություններ և նորաբանություններ

Թեմա 3. Նորաբանությունների կառուցվածքային և ներքերականական առանձնահատկությունները

Թեմա 4. Հեղինակային նորաբանություններ

Թեմա 5. Դիպվածային բառեր

Թեմա 6. Իմաստային նորաբանություններ

Թեմա 8. Նորաբանություններն իբրև խոսքի մասերի փոխակերպման և փոխանցման արդյունք:

3.3. Հլ/մ-0048

Բայի արժույթ (3 կրեդիտ)

Շաբաթական 1.8 ժամ (20 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար), 1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացը նվիրված է բայի արժույթի ուսումնասիրությանը: Բայերի արժույթային դասակարգումը ըստ էության բայերի կառավարման ուսումնասիրությունն է, որի քննության համար նպատակ ունենք լեզվի երեք մակարդակների (բառական, ձևաբանական, շարահյուսական) կապի ու պայմանավորվածության հիմքի վրա ցույց տալ, բացահայտել կառավարման էությունը, այն պայմանավորող յոթնյակները, հիմունքները, ընդհանուր սահմանները, տարբեր խոսքի մասերի և ներխոսքիմասային խմբերի պատկանող բառերի նույնարմատներ, արմատական իմաստի ընդհանրություն ունեցող տարբեր խոսքի մասերի կապակցական առանձնահատկությունները, կառավարման տարբերակները, ինչպես նաև կատարել բայերի արժույթային դասակարգում անցողական ու անանցողական բայերի համար՝ առանձնացնելով զրո արժույթ, միարժույթ, երկարժույթ, եռարժույթ և տասնարժույթ բայերը:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

✓ գիտելիքներ՝ բայի արժույթի համակողմանի ուսումնասիրություն, որն անմիջականորեն կապվում է կառավարող բառի բառաքերականական այն հատկանիշներին, որոնցով պայմանավորվում է կառավարվող բառի քերականական ձևավորումը, այն է՝ կառավարող բառի բառական իմաստը, խոսքամասային և ներխոսքամասային իմաստը, բառի քերականական հատկանիշները, կառավարող բառի կազմությունը և այլն,

- ✓ կարողություններ՝ կատարելու բայի արժույթային դասակարգում
- ✓ հմտություններ՝ հանգամանորեն վերլուծելու բային, ածականին, յոյականին և կապին բնորոշ խնդրառական առանձնահատկությունները
- ✓ ունակություններ՝ բացատրելու ենթակաառություն, ստորո՞առություն, խնդրառություն, պարա՞առություն և կոչականառությունը

Բովանդակությունը.

Թեմա1. Բայերի արժույթային դասակարգումը:

Թեմա2. Ենթակաառություն և ստորո՞առություն:

Թեմա 3 Ներ՞ործական բայերի կառավարում:

Թեմա 4. Չեզոք սեռի բայերի կառավարում:

Թեմա 5. Ենթակաառություն և ստորո՞առություն: Ներօրծական և չեզոք սեռի բայերի կառավարում:

Թեմա 6. Կրավորական սեռի բայերի կառավարում:

Թեմա 7. Գոյականական կառավարում:

Թեմա 8. Ածականային կառավարում:

Թեմա 9. Կապային կառավարում:

Թեմա 10. Կառավարման տարբերակներ:

3.4. Հլ/մ-0049

Խոսքի մասերի կապակցելիությունը հայերենում (3 կրեդիտ)

Շաբաթական 1.8 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար), 1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը

Ուսանողների մոտ կձևավորվի փոփոխներ կապակցության վերաբերյալ, ուսանողը կձևանաչի ժամանակակից հայերենի կապակցելիության տեսանկյունից առնչակից և կապակցման եզրեր չունեցող խոսքի մասերը: Ուսանողը ձեռք կբերի համապատասխան բառապաշար, որի հիման վրա էլ կկարողանա ճիշտ կառուցել խոսքային կաղապարները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

- ✓ գիտելիքներ՝ կապակցության, խոսքի մասերի կապակցելիական հնարավորությունների, խնդիրների, միջփոխակարային առնչությունների մասին, կիմանա բայերի մի շարք խմբեր և ենթախմբեր, որոնք միավորվում են ձևափմաստային և դրանով պայմանավորված՝ կապակցելիական տարբեր հատկանիշներով,
- ✓ կարողություններ՝ ճիշտ բնութագրելու դասանշության և խոսքի մասերի կապակցելիության հիմնական հասկացությունները և տեսությունները:
- ✓ հմտություններ՝ ձեռք բերած տեսական եզրահանգումները կիրառելու խոսքում և կատարելու համեմատական վերլուծություններ,
- ✓ ունակություններ՝ խոսքում կիրառվող բառագործածության սխալներն ուղղելու:

Բովանդակությունը

Թեմա 1. Հասկացություն կապակցության մասին:

Թեմա 2. Նյութական խոսքի մասերի կապակցելիական հնարավորությունները:

Թեմա 3. Ոչ նյութական խոսքի մասերի կապակցելիական հնարավորությունները:

Թեմա 4. Բայի և գոյականի կապակցելիությունը՝ ըստ նրանց դասային խմբերի:

Թեմա 5. Բայ-ստորոգյալի կապակցելիական հնարավորությունները անձնանշությամբ օժտված գոյական-ենթակայի դասային խմբերի հետ:

Թեմա 6. Բայ-ստորոգյալի կապակցելիական հնարավորությունները իրանշությամբ օժտված գոյական-ենթակայի դասային խմբերի հետ:

Թեմա 7. Բայ-ստորոգյալի կապակցելիական հնարավորությունները կենդանանշությամբ օժտված գոյական-ենթակայի դասային խմբերի հետ:

Թեմա 8. Բայ-ստորոգյալի կապակցելիական հնարավորությունները բազմադասությամբ օժտված գոյական-ենթակայի դասային խմբերի հետ

Թեմա 9. Միադիմի բայերն արդի հայերենում

3.5. Հլ/մ-0054

Նախագրային հայերեն (3 կրեդիտ)

Շաբաթական 1.8 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար), 3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակ է ուսուցանել հայերենի նախագրային շրջանի հնչյունական, բառային և քերականական առանձնահատկությունները, հնչյունական այն հիմնական օրենքները, որոնք հատուկ են եղել հայերենին զարգացման վաղ շրջանում: Ցույց տալ հայերենի՝ իբրև ինքնուրույն լեզվի ձևավորման օրինաչափությունները:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

✓ գիտելիքներ՝ հնդեվրոպական նախալեզվի, վաղնջահայերենի և հնագույն հայերենի բառապաշարի, հնչյունական և քերականական օրինաչափությունների մասին:

✓ կարողություններ՝ ցույց տալու հայերենի զարգացման տարբեր փուլերում սպասելի վիճակները:

✓ հմտություններ՝ եղած փաստերի հիման վրա վերականգնել բացակայող օղակները:

✓ ունակություններ՝ բացատրելու գրավոր հայերենում դրսևորված բացառությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հնդեվրոպական նախալեզվի հնչյունական համակարգը:

Թեմա 2. Հնդեվրոպական նախալեզվի բառապաշարը:

Թեմա 3 Հնդեվրոպական նախալեզվի *քերականական առանձնահատկությունները*:

Թեմա 4 Հնագույն հայերենի հնչյունական համակարգը:

Թեմա 5. Հնագույն հայերենի բառապաշարը, բառակազմական միջոցները:

Թեմա 6. Հնագույն հայերենի քերականական առանձնահատկությունները:

Թեմա 7. Վաղնջահայերենի հնչյունական համակարգը:

Թեմա 8. Վաղնջահայերենի բառապաշարը, բառակազմական միջոցները:

Թեմա 9. Վաղնջահայերենի քերականական առանձնահատկությունները:

3.6. Հլ/մ-0055

Լեզվաբանական համամակարդակային գիտակարգեր (3 կրեդիտ)

Շաբաթական 1.8 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար), 3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է լեզվական կառուցվածքի աստիճանակարգության մեջ որոշակիորեն չտեղայնացվող միավորներին հատուկ խնդիրների օգնությամբ գիտակցել տալ գիտությունների զարգացման ճկունությունը, նոր գիտությունների առաջացման անհրաժեշտությունն ու օրինաչափությունը, դրանց կազմավորման ընթացքը, մեկնել, որ լեզվական հիմքերն ու շարույթներն արտալեզվական հիմքերի և շարույթների լեզվական հարաբերակիցներն են, դրանց անդրադարձը լեզվի մեջ:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

- գիտելիքներ՝ լեզվական կառուցվածքի աստիճանակարգությունից, մակարդակային և վերմակարդակային գիտակարգերից, մասնավորապես՝ շարութաբանությունից և լեզվաբանական հիմքագիտությունից,

- կարողություններ՝ կիրառելու նշված գիտակարգերի ընդհանրական դրույթները այլ ոլորտներում, դրանց միջոցով առաջ քաշել խնդիրներ և տալ պահանջվող լուծումներ,

- հմտություններ՝ իրազեկ լինելով ընդհանուր լեզվաբանության, լեզվանշանագիտության և լեզվիմաստասիրության դրույթներին՝ շարութաբանական և հիմքագիտական իրակությունները դրանց հայեցակերպերով բեկելու :

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն: Համամակարդակային գիտակարգերի ըմբռնումը Ծարույթը և հիմքը՝ որպես համամակարդակային հասկացություններ:

Թեմա 2. Արտալեզվական հիմքի ըմբռնումը: Հիմքի առտնին իմաստները: Ճարտարապետական, կենսաբանական, տարրաբանական հիմքերի ուրվագծային բնորոշումները: Լեզվաբանական հիմքի տեսակները և նախնական սահմանումը: Հիմքի ընդհանրական բնորոշումը: Լեզվաբանական հիմքագիտության բաժիններն ըստ նշանային բևեռների հարաբերակցության և ըստ լեզվի կառուցվածքային մակարդակների:

Թեմա 3. Միաբևեռ հիմքակազմություն: Արտահայտության և բովանդակության ոլորտների առանձնական հիմքակազմություն:

Թեմա 4. Երկբևեռ հիմքակազմություն: Ձևաբանական հիմքի նեղ և լայն ըմբռնումները: Նեղ ըմբռնմամբ ձևաբանական հիմքերի կարգային բնութագիրը: Անվանական, դերանվանական, բայական հիմքակազմություն: Աստիճանակազմ հիմքեր:

Թեմա 5. Բառային հիմքի տեսակները: Բաղադրական հիմքեր: Սերող և բաղադրող հիմքերի շարադասական պայմանավորվածությունը: Բաղադրական հիմքակազմության տարածումը ձևաբանական հիմքակազմության վրա և հակառակը:

Թեմա 6. Ծարահյուսական հիմքակազմությունը՝ որպես ձևաբանական հիմքակազմության լայն ըմբռնման արտահայտություն: Ծարահյուսական և բաղադրական հիմքերի հարաբերակցությունը՝ սերող և բաղադրող շարահյուսական հիմքեր: Ասացական հիմքակազմության սահմանները: Ստորոգական հիմքի, հիմքակազմիչների և հարաբերիչների բնութագրությունը:

Թեմա 7. Վերասացական հիմքի տարողությունը: Վերասության բովանդակային և արտահայտական հիմքերը՝ դրանց հարաբերակցությունը: Վերնագիրը՝ որպես վերասության հիմք: Պարբերական հիմքի ըմբռնումը: Պարբերությունը՝ որպես հիմք, և պարբերության հիմքը: Պարբերույթ և պարբերություն: Պարբերությունի կառուցվածքը և բաղադրիչները՝ հենույթ (հենակներ) և պարույր (պարուրակներ): Նվազագույն պարբերությունի և պարբերույթի պատահականությունը՝ դրանց հիմքերն ու վերջիններիս հարաբերակցությունը, ներհիմքային տրամախոսությունը:

Թեմա 8. Ծարութաբանությունը՝ որպես լեզվաբանական գիտակարգ՝ առարկան, խնդիրները: Ծարույթի բնորոշումը:

Թեմա 9. Ծարութաբանական հայեցակարգերի պատմություն (դր Կուրտենե, դր Մոսյուր, Ծառլ Բալլի, Գ. Ջահուկյան, Էդ. Աթայան):

Թեմա 10. Ծարութաբանական հայեցակարգերի տիպաբանություն:

Թեմա 11. Երկուրորտ շարույթի սահմաններն ու հարաչափերը: Ծարահյուսական հարաբերությունների ուրվագծային տիպաբանություն:

Թեմա 12. Գերշարույթ կազմավորող տարրերի բնույթն ու առանձնահատկությունները: Փոխընդհանրության օրենքը: Մենանդամ շարույթի դրավորումը: Գերշարույթի խորքային կազմաբանությունը: Լիաշարույթ:

Թեմա 13. Շարութաբանական և շարահյուսական միավորների պատահականությունը: Գերշարույթի մակարդակային համակցաբանությունը:

Թեմա 14. Մենուլորտ շարույթներ՝ հնչաշարույթ, գրաշարույթ, իմաստաշարույթ: Շարույթի տեղայնացումը և շարահյուսական հարաբերությունների շերտավորվածությունը: Ստորոգման շարութաբանական բնութագիրը:

Թեմա 15. Շարույթի և հիմքի հարաբերակցությունը: Շարութաբանական հիմքի ըմբռնումը:

3.7. Հլ/մ-0057

Արդի լեզվաբանության հարցեր (3 կրեդիտ)

Շաբաթական 1.8 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար), 3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

«Արդի լեզվաբանության հարցեր» դասընթացի նպատակն է մագիստրոսներին հաղորդակից դարձնել արդի լեզվաբանության տեսություններին և հեղինակություններին, դրանով նպաստել նրանց գիտական գործունեության ակտիվացմանը և գրելիք աշխատանքների (ինքնուրույն աշխատանք, մագիստրոսական թեզ, հոդված, ատենախոսություն) արդիականացմանը:

«Արդի լեզվաբանություն» ասվածն ընդգրկում է 20-րդ դարավերջից մինչև մեր օրերը ժամանակահատվածը, այսինքն՝ Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» բուհական դասագրքում ներկայացած շրջաններին հաջորդող ժամանակաշրջանը: Հատուկ ուշադրություն է դարձվելու հատկապես մերօրյա լեզվաբանական տեսությունների, հոսանքների, գիտակարգերի և գործող լեզվաբանների գործունեության վրա:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

- ✓ գիտելիքներ՝ արդի ընդհանուր և հայկական լեզվաբանության հիմնական ուղղությունների, ներկայացուցիչների և ուսումնասիրությունների վերաբերյալ,
- ✓ կկարողանա վերլուծաբար ներկայացնել անցած տեսական գիտելիքները և վերլուծել արդի լեզվաբանական հրապարակումները:
- ✓ հմտություններ՝ գրելիք գիտական աշխատանքներում ուսանողը հմտորեն կկիրառի արդի լեզվաբանական տեսություններից իր իմացությունը, կկատարի արդիական հղումներ՝

- ունակ կլինի բանավիճելու արդի լեզվաբանական հրապարակումների շուրջ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Լեզվաբանության արդի շրջափուլը լեզվաբանության պատմության պարբերացման համատեքստում:

Թեմա 2. Արդի լեզվաբանության գիտակարգերն ու հոսանքները (ավանդականների շարունակությունը և նոր ձևավորվածները):

Թեմա 3. Հոգելեզվաբանություն:

Թեմա 4. Էթնոլեզվաբանություն և կոգնիտիվ լեզվաբանություն:

Թեմա 5. Կորպուսային լեզվաբանություն:

Թեմա 6. Համակարգչային լեզվաբանություն:

Թեմա 7. Արդի ամերիկյան լեզվաբանությունը:

Թեմա 8. Սերող քերականություն:

Թեմա 9. Արդի եվրոպական լեզվաբանությունը:

Թեմա 10. Արդի հայ լեզվաբանությունը:

3.8. Գ/մ- 0241 (4 կրեդիտ)

Սիմվոլիզմը հայ գրականության մեջ

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական), 2-րդ կիսամյակ, քննություն:

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սիմվոլիզմի ստեղծագործական ուղղությանը և հայ գրականության մեջ նրա գրապատմական գործառույթներին: Լինելով 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարասկզբի եվրոպական գրականության առաջատար ուղղություններից մեկը՝ սիմվոլիզմն ունեցել է ներգործության իր ոլորտը և ազգային գրականությունների վրա թողել է իր ազդեցությունը: Հայ գրականությունը ևս բացառություն չէ, և Մեծարենց-Սիամանթո-Ինտրա-Տերյան-Չարենց-Չարյան ուղեգծով սիմվոլիզմը պատմական և գեղարվեստական ճանապարհ է անցել: Այդ տեսական, գեղագիտական և պոետիկական խնդիրները մեր հեղինակների կողմից ուրույն լուծում են ստացել, հետևաբար այս դասընթացի նպատակն է լուսաբանել դրանք կոնկրետ ստեղծագործություններում, ժողովածուներում:

Կրթական արդյունքները

Դասընթացն ավարտելիս ուսանողները պետք է.

- ✓ յուրացրած լինեն սիմվոլիզմի տեսությունը, նրա եվրոպական և ռուսական դպրոցների առանձնահատկությունները.
- ✓ ազգային գրականության այն ստեղծագործությունների վերլուծությունը կարողանան տալ, որոնք սիմվոլիզմի գեղագիտության սահմաններում են.
- ✓ յուրացրած լինեն գտարյուն սիմվոլիստական ստեղծագործությունները.
- ✓ հանձնարարված թեմաներով ռեֆերատներ գրելով՝ փաստեն, որ պոետիկական առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են գրական ուղղությամբ, գործնականում յուրացրել են.
- ✓ սիմվոլիստական պատկերային համակարգի յուրացումը, և ուսանողը պետք է, տեսական հետազոտական աշխատանքներում ներգրավվելով, մշակումների տեսքով ներկայացնի իր ինքնուրույն աշխատանքը.
- ✓ ոչ միայն կոնկրետ թեմայի շրջանակում կարողանա սիմվոլիզմի գեղագիտությունը մեկնաբանել, այլև ծրագրային բոլոր հեղինակների հանձնարարված երկերի շրջանակում.
- ✓ հասկանալ սիմվոլիստական կերպարային համակարգը՝ իր մետաֆորային առանձնահատկություններով:

Բովանդակությունը

Թեմա 1. Սիմվոլիզմի ձևավորման ժամանակաշրջանը /եվրոպական երկրներ/: Ժան Մորեասի Սիմվոլիզմի մանիֆեստը: Հայ գրականության և ռուսական սիմվոլիզմի գրական դպրոցների փոխազդեցության խնդիրը: Ռուս սիմվոլիստները Անդրկովկասում և հայ գրողների հետ նրանց հանդիպումները:

Թեմա 2. Հայ գրականության մեջ սիմվոլիզմի ձևավորման պատմաշրջանի խնդիրները: Գ. Լևոնյանի «Գեղարվեստ» հանդեսը և Լևոնյանի կողմից սիմվոլիզմի տեսության անդրադարձը: Ինտրան արևմտահայ գրականության մեջ որպես սիմվոլիզմի տեսաբան: Մեծարենցը տեսաբան: Տերյանի սիմվոլիզմը: Ե. Չարենցը և «Երեքի դեկլարացիան»: Սիմվոլիզմը Դ. Վարուժանի դիտարկումներում:

Թեմա 3. Ինտրայի «Ներաշխարհը»:

Թեմա 4. Մ. Մեծարենցի «Ծիածան» և «Նոր տաղեր» ժողովածուները:

Թեմա 5. Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն:

Թեմա 6. Սիամանթոյի սիմվոլիստական ստեղծագործությունները:

Թեմա 7. Սիմվոլիզմը Լ. Շանթի դրամատուրգիայում:

Թեմա 8. Ե. Չարենցի ստեղծագործությունը 1912-22 թթ.:

Թեմա 9. Կ. Չարյանի «Մեհյանը»: «Երեք երգ՝ ասելու համար վիշտը երկնքի և վիշտը երկրի» պոեմը: «Օրերի պսակը» ժողովածուն:

Թեմա 10. Սիմվոլիզմը և ոչ սիմվոլիստները:

Թեմա 11. Վ. Տերյանի գրական դպրոցի սաները:

Թեմա 12. Ժամանակակից գրականագիտության անդրադարձը սիմվոլիզմին:

Թեմա 13. Հայկական սիմվոլիզմի յուրահատկությունները:

3.9. Գ/մ-0224

Գրականագիտական և գեղագիտական կատեգորիաներ (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար), 1-ին կիսամյակ, քննություն:

Նպատակը

Բացահայտել գրականագիտական և գեղագիտական կատեգորիաների առանձնահատկությունները, նրանց զարգացման փուլերը՝ կապված համաշխարհային մտքի զարգացման անկյունաքարային աստիճանների հետ (անտիկ, Վերածննդի, նոր և նորագույն շրջաններ), մագիստրանտներին հաղորդել տեսական և գործնական գիտելիքներ՝ նրանց զինելով ապագա գործունեության ընթացքում ուղենիշ մեթոդիկայով:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա գրականագիտական և գեղագիտական կատեգորիաների իր իմացությունը կիրառել վերլուծությունների, ուսումնասիրության, դասավանդման ընթացքում՝ դրանք զուգորդելով գրականության տեսությունից իր ձեռք բերած գիտելիքների հետ: Սրա արդյունքում գրական ցանկացած գործ դիտարկվելու է ոչ միայն գրականության պատմության համապատկերում, այլև բացահայտվելու են նրա գեղագիտական դերն ու գործառույթը, նորույթն ու յուրահատկությունը:

Բովանդակությունը

Թեմա 1. Ներածություն: Կատեգորիաների դերը, տեղը, նրանց առանձնահատկությունները և զարգացման հիմնական բնութագիրը: Գերակա (դոմինանտ) կատեգորիաներ:

Թեմա 2. Գեղագիտական գրականագիտական կատեգորիաները անտիկ, Վերածննդի, կլասիցիզմի, լուսավորության և նոր ժամանակներում:

Թեմա 3. Գեղագիտական կատեգորիաների բևեռացումը՝ գեղեցիկն ու սոցիալը, վեհն ու նսեմը, ողբերգականը և կատակերգականը, դրամատիկականը և քնարականը:

Թեմա 4. Գեղագիտական հարաբերություններ, գեղագիտական գիտակցություն, գեղագիտական գործունեություն, գեղագիտական ճաշակ, գեղագիտական պահանջմունք:

Թեմա 5. Գեղագիտական գերակա (դոմինանտ) կատեգորիայի խնդիրը. գեղեցիկը, իդեալը, ներդաշնակությունը, գեղագիտականը:

3.10. Գ/մ-0242.

Թարգմանության տեսություն և գործընթաց (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական), 3-րդ կիսամյակ, քննություն:

Նպատակը

Դասընթացի նպատակը թարգմանական արվեստի զարգացման և առանձնահատկությունների, տարբեր երկերի թարգմանական տարբերակների համադրումն է, ծանոթացումը հայ և ռուս գրականությունների թարգմանված ստեղծագործությունների լավագույն նմուշներին: Թարգմանական երկի որակական բնույթը պահպանելը թարգմանական արվեստի հիմնական նպատակն է:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա հստակ և ամբողջական պատկերացում կազմել թարգմանության տեսության և գործընթացի մասին, համադրել թարգմանական երկը բնագրի հետ, ցույց տալ թարգմանչի հմտությունը և և կարողությունը՝ ամբողջությամբ ընկալելու բնագիրը:

Բովանդակությունը

Թեմա 1. Թարգմանության տեսության պատմություն, զարգացման հիմնական առանձնահատկությունները, դրույթները:

Թեմա 2. Բառացի և ազատ թարգմանություն, վիճելի հարցերը տեսության և գործընթացի մեջ, գեղարվեստական խոսքի ոճական նրբերանգները:

Թեմա 3. Թարգմանության՝ դժվարություն ստեղծող տարրերը՝ տիրույթներ, հատկաբանություններ, բառախաղեր, հնարանություններ, դարձվածքներ և այլն:

Թեմա 4. Գրականագիտական կամ լեզվական սկզբունթի առաջնությունը երկը թարգմանելիս: Համարժեքային թարգմանության ընդունումը որպես համալիր ուսումնասիրության առարկա:

Թեմա 5. Թարգմանչի անհատականության անհրաժեշտությունը, հեղինակի անհատական ոճի պահպանման կարևորությունը, բնագրին հավատարիմ մնալու խնդիրը:

Թեմա 6. Հայ արվեստագետները գեղարվեստական թարգմանության մասին՝ սկսած 5-րդ դարից: 19-20-րդ դարերի հայ անվանի գրողների կարծիքները՝ էլնելով նրանց տեսական դիտարկումներից. Ռ. Պատկանյան, Ալ. Ծատուրյան, Հովհ. Թումանյան, Ա. Չոպանյան, Ստ. Զորյան, Կ. Սուրենյան, Վ. Դավթյան, Գ. Էմին, այլք:

Թեմա 7. Թարգմանության գործընթացը. բանաստեղծական խոսքի թարգմանության դժվարությունները՝ ռիթմ, հանգ, տաղաչափություն:

Թեմա 8. Հայ գրողների երկերի ռուսերեն թարգմանության մի շարք դիտարկումներ. հայրեններ, Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց, Սևակ, այլք:

Թեմա 9. Ռուս բանաստեղծների ստեղծագործությունների հայերեն թարգմանության մի շարք դիտարկումներ. Ֆ. Տյուտչև, Վլ. Մայակովսկի, Ս. Եսենին, Ալ. Բլոկ, Աննա Ախմատովա, Մ. Յվետանա, այլք:

Թեմա 10. Արձակ երկերի թարգմանության մի շարք առանձնահատկություններ. լեզվաոճական շերտերը, ծանոթագրությունները և այլն:

Թեմա 11. Մ. Գորկու, Մ. Զոշչենկոյի, Մ. Բուլգակովի, Վ. Շուկշինի ստեղծագործությունների թարգմանության վերլուծությունը:

Թեմա 12. Թարգմանական արվեստի դժվարությունները. հատուկ բառարաններ թարգմանիչների համար:

Թեմա 13. Թարգմանությունը որպես արվեստ և ոչ թե գիտություն:

3.11. **Գ/մ-**

20-րդ դարի 60-80-ական թ.թ. հայ արձակի տեսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական), 3-րդ կիսամյակ, քննություն:

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել 20-րդ դարի 60-ական թվականների գրականության փուլայնությունը, գրականության և արվեստի մեջ կատարված խոշոր տեղաշարժերը, գրական հերոսի անհատականության փոխակերպումը, մարդու ներաշխարհի բացահայտումների խորությունը, ժանրերի կրած փոփոխությունները, դիպաշարայինից դեպի գիտակցական հոսքեր կատարված տեղաշարժերը, գրականության տեսության մեթոդոլոգիայի կրած փոփոխությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կխորացնի գիտելիքները գրականության տեսությունից, այն կձանաչի որպես համակարգ,
2. կհստակեցնի գրականագիտության մեթոդոլոգիայի, հիմնական հասկացությունների մասին ունեցած պատկերացումները,
3. գիտելիք կստանա 20-րդ դարի 60-80-ական թվականների արձակի զարգացման առանձնահատկությունների մասին,
4. կդիտարկի գրական գործընթացի զարգացման օրինաչափությունները:

Բովանդակությունը

Թեմա 1. Գրականության տեսությունը որպես համակարգ:

Թեմա 2. Գրականագիտության մեթոդաբանությունը և հիմնական հասկացությունները:

Թեմա 3. Սեռի և ժանրի տեսություն:

Թեմա 4. 20-րդ դարի 60-80-ական թվականների հայ արձակի ժանրերի զարգացման տեսություն:

Թեմա 5. Հերոս-անհատականության ներաշխարհը և արարքի փիլիսոփայությունը:

Թեմա 6. Վեպի տիպաբանությունը, դասակարգման սկզբունքները:

Թեմա 7. Փոքր ժանրերի զարգացման առանձնահատկությունները:

Թեմա 8. Գրական գործընթացի զարգացման օրինաչափությունները:

3.12. **Գ/մ-0223**

Հայ հին և միջնադարյան գրականության տեսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական), 1-ին կիսամյակ, քննություն, 4 կրեդիտ:

Նպատակը

1. Ուսանողներին զինել հայ գրականության մասին գիտելիքներով:
 2. Խորացնել և ընդլայնել ուսանողների հին և միջնադարյան հայ գրականությանը վերաբերող ընդհանուր գիտելիքները:
 3. պարզաբանել գրական երկի վերլուծության և արժևորման նոր ելակետերի առաջադրման հարցերը, տեսական հարցադրումները, պոետիկայի խնդիրները:
 4. Նախապատրաստել բանասիրական ցիկլի առարկաների հետագա ուսումնասիրությանը:
- Կրթական արդյունքները**
Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կստանա գիտելիքներ՝ հայ հին և միջնադարյան գրականության տեսական հիմնահարցերի մասին,
2. կկարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում,
3. կտիրապետի գրականության ուսումնասիրման մեթոդներին,
4. ձեռք կբերի որոշ գիտական հարցերի շուրջ ինքնուրույն եզրահանգումներ կատարելու ունակություններ:

Բովանդակությունը

Թեմա 1. Նախամաշտոցյան շրջանի գրի և գրականության հարցի շուրջ:

Թեմա 2. Հայ գրականությունը 5-րդ դարում:

Թեմա 3. Հայ գրականությունը 6-9 դարերում:

Թեմա 4. Հայ գրականությունը 10 -12 դարերում:

Թեմա 5. Հայ գրականությունը 13 – 16 դարերում:

Թեմա 6. Հայ գրականությունը 17 – 18 դարերում:

3.13. Գ/մ-

Աստվածաշունչը և հայ գրականությունը

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական), 3 կրեդիտ

Նպատակը

Ուսանողներին զինել սուրբգրային իմացությամբ, հայ գրականության մասին գիտելիքներով: Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր գիտելիքները, որ վերաբերում են հին և միջնադարյան հայ գրականությանը: Դասընթացում կարևորվում են գրական երկի վերլուծության և արժևորման նոր ելակետերի առաջադրման հարցերը, տեսական հարցադրումները, պոետիկայի խնդիրները: Այս ոլորտում ձեռք բերած գիտելիքները կիրառել պրակտիկ գործունեության մեջ: Նախապատրաստել բանասիրական ցիկլի առարկաների հետագա ուսումնասիրությանը:

Կրթական արդյունքները

- Առարկայի ուսումնասիրման արդյունքում ուսանողները պետք է.
- կարողանան ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում,
 - լավագույնս պատկերացնեն աստվածաշնչյան թևավոր արտահայտությունների, դարձվածների ծագումը, բառացի իմաստը և արդի նշանակությունը,
 - տիրապետեն հաղորդակցության ուսումնասիրման մեթոդներին,
 - կարողանան որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը

Թեմա 1. Աշխարհի հնագույն գրականության հուշարձաններից մեկը՝ Ս. Գիրքը

Թեմա 2. Հին ու նոր կտակարանները

Թեմա 3. Հայոց այբուբենը որպես կապակցված խոսք, ձոն-աղոթք առ Աստված

Թեմա 4. Հայ գրավոր գրականության սկզբնավորումը Աստվածաշնչի թարգմանական էջերով.

Թեմա 5. Ոսկեդարի հայ գրականության ժանրային համակարգը

Թեմա 6. Աստվածաշունչը և հայ մատենագրությունը

Թեմա 7. Աստվածաշունչը և հայ հին ու նոր գրականություն

Թեմա 8. Աստվածաշունչը և հայ նորագույն գրականությունը

Թեմա 9. 20-րդ դարավերջյան և ժամանակակից գրականության մեջ աստվածաշնչյան թեմաների անդրադարձումները

Թեմա 10. «Նարեկի» աղերսները Ս. Գրքի հետ

Թեմա 11. Աստվածաշնչի դերը հայ և համաշխարհային մշակույթի զարգացման գործում:

3.14. Գ/մ-

Գրականությունը համացանցում

Շաբաթական 2 ժամ, 20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական, 3 կրեդիտ

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսուցանել համացանցային գրականության առանձնահատկությունները, ներկայացնել էլեկտրոնային գրադարանները, դրանց դասակարգումները, գործառույթները, հատկանիշներն ու հնարավորությունները, դրանք ճիշտ օգտագործելու ուղիները, էլեկտրոնային գիրքը՝ որպես տպագիր գրքի երկվորյակ՝ ընդհանրությունների ու տարբերությունների զուգադրմամբ: Կարևորվում է համընդհանուր թվայնացման պատմությունը, գրականությունը ցանց փոխադրելու գործընթացի իմացությունը, ցանցագրականության առավելությունների ու թերությունների ուսուցումը: Առանցքային նպատակներից է ժամանակակից հայ հեղինակների գործերը համացանցային միջավայրում գտնելու և ընթերցելու ուղիների մեթոդաբանության ուսուցումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը պետք է.

- ✓ ամբողջական պատկերացում ունենա համացանցի ստեղծման, զարգացման պատմության մասին.
- ✓ իմանա տպագիր և էլեկտրոնային գրքերի ընդհանրություններն ու տարբերությունները, առավելություններն ու թերությունները.
- ✓ պատկերացնի էլեկտրոնային գրադարանի կառուցվածքն ու հնարավորությունները, վիրտուալ միջավայրում գրադարան այցելելու ուղիները.
- ✓ կարողանա զանազանել ցանցագրականությունը ցանցային գրական միջավայրից.
- ✓ կարողանա այցելել էլեկտրոնային գրադարան կամ այլ գրական կայքերում գտնել որևէ գրական երկ, հոդված, գրախոսություն և այլն, ներբեռնել, ընթերցել կամ պատճենել.
- ✓ պատկերացում ունենա հայ գրականության թվայնացման գործընթացի մասին, իմանա հարուստ գրական կայքերի հասցեները, դրանցից օգտվելու եղանակները:

Բովանդակությունը

Թեմա 1. Համացանցի ստեղծումն ու զարգացման ընթացքը:

Թեմա 2. Ինտերտեքստայնություն, բնորոշումն ու մեկնաբանությունը: Հիպերտեքստը համացանցում:

Թեմա 3. Տպագիր և էլեկտրոնային գրքերի ընդհանրություններն ու տարբերությունները, առավելություններն ու թերությունները:

Թեմա 4. Համացանցի և գրականության փոխազդեցության խնդիրը:

Թեմա 5. Թվայնացման գործընթացն ու ձևաչափերը: Էլեկտրոնային գրադարաններ, դասակարգումն ու առանձնահատկությունները: Աշխարհի խոշորագույն գրադարաններն ու էլեկտրոնային գրադարանները:

Թեմա 6. Ցանցագրականության առանձնահատկությունները:

Թեմա 7. Համացանցային գրական միջավայրը Հայաստանում:

Թեմա 8. Հայալեզու գրական կայքեր:

Թեմա 9. Գրական համացանցի ապագան. կանխատեսումներ:

Թեմա 10. Էլեկտրոնային և տպագիր գրքերի պայքարը:

Թեմա 11. Ցանցի առաջատար հեղինակներն ու գրական ժանրերը:

3.15. Գ/մ-

Փոքր արձակի ժանրերի զարգացման տեսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական), քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել արձակի փոքր ժանրերի (նովել, պատմվածք, վիպակ, ակնարկ) զարգացման փուլերը, այդ փուլերի առանձնահատկությունները, ժանրերի կրած փոփոխությունները, ժանրային անցումների հիմնավորումները, նախասկզբնականից մինչև ժամանակակից փուլ կրած ազդեցությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կխորացնի սեռի, ժանրի մասին ունեցած գիտելիքները,
2. կճանաչի փոքր արձակի ժանրերի զարգացման փուլերի առանձնահատկությունները,
3. գիտելիք կստանա վավերագրական և գեղարվեստավավերագրական արձակի ժանրերի մասին,
4. կկարողանա որոշել ցանկացած ստեղծագործության ժանրը, ճանաչել առանձնահատկությունները, նկատել ժանրային փոփոխությունները:

Բովանդակությունը

Թեմա 1. Մեռ և ժանր: Զարգացման փուլերը, դիալեկտիկան:

Թեմա 2. Նովել:

Թեմա 3. Պատմվածք:

Թեմա 4. Վիպակ:

Թեմա 5. Հերոս-կերպար- անհատականություն:

Թեմա 6. Պատում:

Թեմա 7. Ակնարկ: Ժանրերը: Անցումները վավերագրականից գեղարվեստականի:

3.16. Գ/մ-

20-րդ դարի 50-80-ական թ.թ. հայ պոեզիայի տեսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական,), 3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ներկայացնել հայ գրականության, մասնավորապես պոեզիայի, զարգացման ատանձնահատկությունները, հետպատերազմյան շրջանի գրականությունը, գրական սխեմատիզմի դեմ պայքարը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա հստակ և ամբողջական պատկերացում կազմել այդ շրջանի գրականության զարգացման միտումների և առանձնահատկությունների վերաբերյալ, վերլուծել բնագիրը և յուրաքանչյուր հեղինակին բնութագրել ըստ արժանվույն:

Բովանդակությունը

Թեմա 1. 20-րդ դարի 50-80-ական թ.թ. հայ գրականության ընդհանուր բնութագիրը, զարգացման հիմնական ուղղությունները:

Թեմա 2. Ժամանակաշրջանի արձագանքները հայ գրողների ստեղծագործություններում, ձևային շրջանի գրականության սահմանների ընդարձակումը:

Թեմա 3. Պ.Սևակի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, գրականության մեջ մեջ նրա դերի արժևորումը: Բանաստեղծության և պոեմի ժանրերում Պ. Սևակի նորարարությունը:

Թեմա 4. Պ. Սևակի գրական հայացքները պոեզիայի զարգացման վերաբերյալ: Ավանդույթ և նորարարություն:

Թեմա 5. Պ. Սևակի պոեմները, թեմատիկ ընդհանրությունները. սիրային թեման, եղեռնը:

Թեմա 6. Հ. Սահյանի ստեղծագործության թեմատիկան և պոետիկան:

Թեմա 7. Հ. Սահյանի ժողովածուների վերլուծությունը, հավերժական թեմաների սահյանական արտահայտությունը:

Թեմա 8. Ս. Կապուտիկյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, թեմատիկան՝ սիրո, հայրենիքի, կարոտի երգը: Ս. Մարգարյանի ստեղծագործությունը:

Թեմա 9. Վ. Դավթյանի ժողովածուները, բանաստեղծական խոսքի ինքնատիպությունը:

Թեմա 10. Վ. Դավթյանի ստեղծագործության պոետիկան, պատկերավոր խոսքի գործածությունը, զուգահեռները:

Թեմա 11. Գ. Էմինի, Հր. Հովհաննիսյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:

Թեմա 12. Հայ գրականության լավագույն նմուշների համադրումը ռուս և համաշխարհային գրականության թարգմանված ստեղծագործությունների հետ:

Թեմա 13. Գեղարվեստական ուղղությունների դրսևորումը 50-80-ական թվականների հայ պոեզիայի մեջ:

Թեմա 14. 60-ականների սերնդի ստեղծագործությունը. նորարարությունը, ազատության ներքին ձգտումը: Բանաստեղծական կաղապարված ձևերից ձերբազատվելու և նոր նոր ձևերին ապավինելու մղումը:

3.17. Գ/մ-

Հայ դրամատուրգիայի պատմություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական,), 4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակը հայ դրամատուրգիայի սկզբնավորման, ծավալման և ամբողջացման ընթացքի համապարփակ ներկայացման փորձն է, որի ընթացքում ուսանողները պետք է լիարժեք պատկերացում կազմեն հայ դրամատուրգիայի պատմական զարգացման վերաբերյալ, ճանաչեն հանգուցային դրամատիկական երկերը:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա հստակ ու ամբողջական պատկերացում կազմել հայ դրամատուրգիայի զարգացման միտումների և առանձնահատկությունների վերաբերյալ, վերլուծել բնագիր և ճշտել այս կամ այլ հեղինակի և այս կամ այլ դրամատիկական ստեղծագործության տեղն ու դերը գրական համապատկերում, նրա բերած նորույթը, ասելիքի, կերպարային համակարգի և կոնֆլիկտի յուրահատկությունները:

Բովանդակությունը

Թեմա 1. Հայ դրամատուրգիայի ձևավորման նախափորձերը. Մխիթարյաններ, Լվովի հայկական համայնքի գործունեությունը:

Թեմա 2. Դրամատուրգիայի տեսական համակարգի ձևավորումը Խաչատուր Էրզրումեցու, Մխիթարյանների, Սարգիս Տիգրանյանի կողմից:

Թեմա 3. Պետրոս Մինասյանի դրամատուրգիան:

Թեմա 4. Հոգևոր-սրբախոսական և պատմական-հայրենասիրական դրաման արևմտահայ իրականության մեջ:

Թեմա 5. Ռեալիստական դրամայի սկզբնավորումը արևելահայ իրականության մեջ: Սունդուկյանի նախորդները. Ալադաթյան, Տեր-Գրիգորյան, Փուլիկյան, Կարենյան: Վոդևիլի ժանրը:

Թեմա 6. Գ. Սունդուկյանի դրամատուրգիան:

Թեմա 7. Մ. Պեշիկթաշյանի և Պ. Դուրյանի դրամատուրգիան: Նրանց հաջորդները. Թ. Թերզյան:

Թեմա 8. Ռեալիստական դրամատուրգիան արևմտահայ իրականության մեջ. Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունը

Թեմա 9. Ալ. Շիրվանզադեի դրամատուրգիան:

Թեմա 10. 20-րդ դարասկզբի դրամատուրգիան. Մուրացան, Վրթ. Փափազյան, Լ. Մանվելյան:

Թեմա 11. Լ. Շանթի դրամատուրգիան:

Թեմա 12. Դ. Դեմիրճյանի դրամատուրգիան:

Թեմա 13. Ն. Զարյանի դրամատուրգիան:

Թեմա 14. Հայ դրամատուրգիան 20-րդ դարի 50-80-ական թ.թ. Ա. Շահինյան, Ժ. Գրիգորյան...

Թեմա 15. Սփյուռահայ դրամատուրգիան. Հակոբ Օշական, Համաստեղ, Արա Արծրունի, Արման Վարդանյան...

Թեմա 16. Հայ դրամատուրգիայի այսօրը. Պերճ Զեյթունցյան, Աղասի Այվազյան, Կարինե Խոդիկյան, այլք:

3.18. Գ/մ-

Հնախոսական պատկերացումը հայ հին և միջնադարյան գրականության համաբնագրում (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական, 4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակը միջկրոնական գիտակցության ձևերի, բանահյուսական խոսքի և հոգևոր երգի ժառանգորդական շարժման վերաբերյալ պատկերացումներ ձևավորելն է հետևյալ դիրքորոշմամբ. հին իմաստաբանությունից դեպի ժողովրդական բանահյուսություն, ժողովրդական բանահյուսությունից դեպի հեղինակային գեղարվեստական տեքստ:

Կրթական արդյունքները

Ուսանողը պիտի կարողանա.

- ✓ հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները.
- ✓ օգտագործել քննադատական վերլուծության արդի տեսությունների զարգացման մեթոդները.
- ✓ ցուցաբերել ինքնուրույնություն տվյալ առարկայական ոլորտում:

Բովանդակությունը

Թեմա 1. Հնախոսական արքեոտիպի գեղարվեստական այլաբանությունը:

Թեմա 2. Նախնական հավատալիքներ (հմայական աղոթք, սնահավատական գրույցներ):

Թեմա 3. Արևային և լուսնային առասպելները (պատմատիպաբանական քննություն)

Թեմա 4. Առասպելաբանական գրույցներ բույսերի և կենդանիների մասին:

Թեմա 5. Մեռնող-հառնողի առասպելները (հանելուկաշար, Էր-Արա):

Թեմա 6. Հանդերձյալ կյանքի պատկերացումները (հոգիների ուղևորություն, դատաստան, դրախտ, դժոխք, Մազե կամուրջ):

Թեմա 7. Հնախոսական պատկերացումը Մշո և Մոկաց տարբերակներում (ժողովրդական վեպի 10 պատումների հիմքով):

Թեմա 8. Հնախոսական պատկերացումը 5-րդ դարի մատենագրության մեջ:

Թեմա 9. Հնախոսական պատկերացումը դրամատիկացված թատր- ներկայացումների մեջ:

Թեմա 10. Հնախոսական պատկերացումը հայրեններում:

Թեմա 11. Հին հավատք հայոցը միջնադարյան տաղերգության մեջ:

Թեմա 12. Ծիսական աջը և ձախը հնախոսական պատկերացումներում:

3.19. Գ/մ-

Բանահյուսության տեսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական), 4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է համակարգել և խորացնել ուսանողի գիտելիքները, բանահյուսական ավանդույթների, տարբերակայնության, ժանրաստեղծման, փուլայնության, համադրականության, փոխներթափանցման մեթոդի, տիպաբանության, բանահյուսական նյութերի պատումի մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կճանաչի բանահյուսական տարբեր ժանրերի զարգացման փուլայնությունը,

2. կկարողանա համադրական (սինեսկրետիկ) արվեստի տարրերը ճանաչել առանձին ստեղծագործությունների մեջ,
3. գիտելիք կստանա փոխներթափանցման մեթոդի մասին,
4. կխորացնի բանահյուսկան-գեղարվեստական համակարգի մասին ունեցած գիտելիքները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բանահյուսական ավանդույթ:

Թեմա 2. Տարբերակայնություն:

Թեմա 3. Փոխներթափանցման մեթոդ:

Թեմա 4. Փուլայնություն:

Թեմա 5. Ժանրաստեղծում:

Թեմա 6. Ժամանակ և տարածություն:

Թեմա 7. Գեղարվեստական համակարգ:

Թեմա 8. Բանահյուսական տիպաբանություն:

3.20. Գ/մ-

Գրականագիտության արդի փուլը (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական), 4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել գրականագիտական նորագույն տեսությունների վերաբերյալ գիտելիքներով և արդի շրջանի գրականագետների գիտական հայացքներն ու մոտեցումները ներկայացնել՝ շեշտը դնելով առանցքային թեմաների և հարցերի վրա: Կարևորագույն նպատակ է ոչ միայն ժամանակակից հայ գրականագետների վաստակի մասին պատկերացում տալ, այլև ընդհանուր ձևով համակարգել գրականագիտության զարգացման արդի փուլի տեղաշարժերն ու նորույթները: Դասընթացի առանցքային նպատակն է գիտական ժամանակի հետ սերտ կապի պահպանումը, գրականագիտության զարգացման միտումների բացահայտումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողները պետք է.

- ✓ ընթերցած լինեն հանձնարարված տեսական գրականությունը,
- ✓ խորացնեն « Գրականագիտության հիմունքներ » առարկայից ունեցած գիտելիքները,
- ✓ կարողանան ներկայացնել գրականագիտական նորագույն մոտեցումները,
- ✓ կատարեն ինքնուրույն վերլուծություն,
- ✓ ըստ ստացած գիտելիքների՝ արժևորեն կամ վերաբժնորեն գրական գործերը,
- ✓ ժամանակակից գրականության ընթացքի արտացոլումը տեսնեն արդի շրջանի գրականագիտական աշխատություններում,
- ✓ յուրացնեն արտասահմանյան տեսաբանների հայացքները:

Բովանդակությունը

Թեմա 1. Գրականագիտության ընթացքը 1990-ական թվականներից: Զարգացման ակունքները: Գրականության դերի անկումը հանրային գիտակցության մեջ: Քննադատության դերի անտեսումը: Գրական մամուլը: /Սևակը՝ քննադատ/:

Թեմա 2. Ս. Սարինյան: Սարինյանը՝ գրաքննադատ և գրականության պատմաբան: Սարինյանի հոդվածները մամուլում: Հիմնական աշխատություններն ու ժողովածուները:

Թեմա 3. Հր. Թամրազյանի գրականագիտական հայացքները: Ս. Արզումանյանի մենագրությունները: Նորագույն շրջանի հայ վեպի պատմությունը: Գ. Անանյանը՝ գրականագետ և քննադատ:

Թեմա 4. Հր. Մաթևոսյան: Ժամանակակից գրականության, գրողի դերի և կոչման, գրական վարպետության հարցերը հոդվածների, հարցազրույցների ու երկխոսությունների մեջ:

Թեմա 5. Վ. Գաբրիելյանը արևմտահայ և սփյուռքահայ գրականության մասին: Ժ. Քալանթարյանի հիմնական գրականագիտական աշխատությունները՝ «Հայ քննադատության տեսության և պատմության հարցեր», «Անդրադարձներ», այլ:

Թեմա 6. Ազատ Եղիազարյանը՝ գրականության պատմաբան և քննադատ: Դ. Գասպարյանի գրականագիտական հայացքները:

Թեմա 7. Քննադատների նոր սերնդի ձևավորումն ու մասնակցությունը գրական ընթացքին՝ Վ. Եղիազարյան, Ռ. Արիստակեսյան, Վ. Փիլոյան, Հ. Համբարձումյան, Ա. Նիկողոսյան և ուրիշներ:

Թեմա 8. Արտասահմանյան գրականագիտության արդի շրջանը: Փիլիսոփայական հիմքերը: Կ. Գ. Յունգ. արքետիպերի տեսությունն ու կոլեկտիվ անգիտակցականը:

Թեմա 9. Ստրուկտուրալիզմ: Հետստրուկտուրալիզմ, աղբյուրները՝ Դեյյոզ, Դերիդա, Բոդրիար, Կրիստևա:

Թեմա 10. Ռ. Բարտ: Նշանագիտություն: Ռ. Բարտը և հեղինակի մահը:

Թեմա 11. Յու. Լոտմանի աշխատություններն ու հայացքները:

Թեմա 12. Ու. Էկոյի դերը արդի գրականագիտության մեջ: Հիմնական գործերը՝ «Նշումներ «Վարդի անունը» վեպի էջերում», «Արվեստն ու գեղեցկությունը միջնադարյան գեղագիտության մեջ», «Բաց ստեղծագործություն» և այլն:

IV. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԿՐԹԱՄԱՍ

4.1. Հլ/մ-0054.

Բարձրագույն դպրոցի դասավանդման մեթոդիկա

Շաբաթական 3 ժամ (26 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական), 2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Թեմա 1. Բանասիրական ոլորտի գիտակարգերը և առանձնահատկությունները (ներածություն):

Թեմա 2. Գրականագիտական և բանագիտական մեթոդաբանության խնդիրներ:

Թեմա 3. Լեզվաբանական գիտակարգերի ուրվագծային բնութափրբ:

Թեմա 4. Տիպաբանական լեզվաբանությունը, նրա դասավանդման խնդիրները և նպատակը:

Թեմա 5. Պատմական լեզվաբանությունը, նրա դասավանդման խնդիրները և նպատակը:

Թեմա 6. Լեզվաբանության հիմունքների դասավանդման խնդիրներն ու նպատակը:

Թեմա 7. Լեզվանշանագիտության դասավանդման խնդիրները և նպատակը:

Թեմա 8. Բարբառագիտության դասավանդման առարկան և խնդիրները:

Թեմա 9. Դարձվածաբանության և բառարանաբանության դասականուման խնդիրները և նպատակը:

Թեմա 10. Նկարագրական լեզվաբանությունը, նրա դասականուման խնդիրները և նպատակը:

4.2. Մ/մ-0287.

Բարձրագույն դպրոցի մանկավարժություն և հոգեբանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (22 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար), 1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է սովորողների կողմից մանկավարժական տեսության և պրակտիկայի տիրապետում, ստեղծագործական կարողությունների զարգացում և նոր իրավիճակներում արագ կողմնորոշվող բարձր որակավորում ունեցող մասնագետի պատրաստում:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

1. գիտելիքներ բարձրագույն դպրոցի մանկավարժության առարկայի, խնդիրների և մեթոդների, դասախոսի ֆունկցիաների, ժամանակակից կրթական համակարգերի վերաբերյալ,
2. բարձրագույն դպրոցի մանկավարժության բնագավառի մեթոդների և նոր տեխնոլոգիաների տիրապետում՝ բուհական գործունեության տարբեր իրավիճակներում դրանք կիրառելու նպատակով:

Բովանդակությունը

Թեմա 1. Բարձրագույն դպրոցի մանկավարժության խնդիրները և մեթոդները: Կրթությունը ժամանակակից աշխարհում: Անընդհատ կրթության համակարգը:

Թեմա 2. Բարձրագույն դպրոցի դիդակտիկան: Բարձրագույն դպրոցի կրթության եռությունը, բովանդակությունը և միջոցները:

Թեմա 3. Ուսուցման մեթոդները և կազմակերպման ձևերը բարձրագույն դպրոցում: Ուսուցման տեխնոլոգիաները:

Թեմա 4. Դասախոսը որպես մանկավարժական գործունեության կազմակերպիչ:

Թեմա 5. Ուսանողը որպես ուսումնադաստիարակչական գործողության սուբյեկտ: Ուսանողի դաստիարակչության հիմունքները բարձրագույն դպրոցում:

Թեմա 6. Դաստիարակչական աշխատանքի կազմակերպման գիտական հիմունքները, համակարգը, մեթոդները բարձրագույն դպրոցում:

Թեմա 7. Կրթության համակարգը ՀՀ-ում:

V. Այլ բաղադրիչներ

5.1. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար (8 կրեդիտ) ` 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կիսամյակ

5.2. Գիտահետազոտական պրակտիկա (3 կրեդիտ) ` 4-րդ կիսամյակ

5.3. Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով (9 կրեդիտ) ` 2-րդ (2 կրեդիտ), 3-րդ (2 կրեդիտ), 4-րդ (5 կրեդիտ) կիսամյակներ:

5.4. Մագիստրոսական թեզի ձևակերպում և պաշտպանություն (12 կրեդիտ) ` 4-րդ կիսամյակ: